Մի՞թե չգիտեք, որ Սուրբ Հոգին չի կարող մտնել և չի մտնի նրանց հոգիները, ովքեր կարծրացած են սրտով

Չորեքշաբթի, 29 փետրվարի, 2012թ, երեկոյան ժ 05:30

Իմ սիրելի աղջիկ, Իմ Հոր սահմանած ժամանակները ձեր գիտենալու համար չեն:

Իմ հետևորդները պետք է համբերատար լինեն մինչ ամեն ինչ կծավալվի աշխարհում ինչպես Իմ Հոր Գրքում է կանխասացված:

Այս ամենը կլինի Իմ Հոր հաստատած ժամանակին և գլոբալ պատերազմները կանխելու նպատակով ձեր ասած աղոթքների ունեցած ազդեցությանը համապատասխան:

Շատ չի մնացել որ Իմ բոլոր մարգարեությունները կատարվեն:

Դուք, Իմ հետևորդներ, պետք է վստահեք Ինձ՝ ձեր սիրող Հիսուսին:

Աղոթեք հոգիների համար և ամեն ինչ թողեք Իմ ձեռքերի մեջ:

Երբեք չմոռանաք որքան հաճած կարող եք աղոթել Իմ Հորը՝ Կենդանի Աստծո Կնիքի համար, որպեսզի պաշտպանեք ձեզ և ձեր ընտանիքները:

Աղոթքի խաչակրաց արշավանք (33) **Կենդանի Աստո Կնիքը խնդրելու և այն սիրով, ուրախությամբ և երախտագիտությամբ ընդունելու համար:**

Ով Աստված իմ, իմ Սիրող Հայր

Ես սիրով և երախտագիտոթյամբ ընդունում եմ

Պաշտպանության Քո Աստվածային Կնիքը,

Քո Աստվածայնությունը ներառում է իմ մարմինը և հոգին հավիտենությունը

Ես խոնարհվում եմ խոնարհ երախտագիտությամբ և առաջարկում քեզ իմ խորը սերն ու հավատարմությունը

Քեզ՝ իմ Սիրելի Հայր,

Ես խնդրում եմ Քեզ, որ պաշտպանես ինձ և իմ սիրելիներին այս հատուկ Կնիքով

և ես իմ կյանքն եմ դնում քեզ ծառայելու համար հավիտյանս հավիտենից,

ես սիրում եմ Քեզ սիրելի Հայր

ես սփոփում եմ Քեզ այս ժամանակներում սիրելի Հայր,

Ես առաջարկում եմ քեզ քո սիրելի Որդու Մարմինը, Արյունը, Հոգին և Աստվածայնությունը աշխարհի մեղքերի քավության և քո բոլոր զավակների փրկության համար:

Ամեն:

Խրախուսեք նաև ուրիշներին, որ աղոթեն Խաչակրաց արշավանքի յոթօրյա աղոթքը (24) իրենց մեղքերի համար թողություն խնդրելու:

Ով Իմ Հիսուս, Դու երկրի Լույսն ես

Դու այն բոցն ես, որ դիպչում է բոլոր հոգիներին

Քո գթասրտությունն ու սերը սահման չեն ճանաչում

ՄԵնք արժանի չեն այն զոհաբերությայնը, որը Դու կատարեցիր խաչի վրա

Սակայն գիտենք, որ մեր հանդեպ Քո սերն ավելի մեծ է, քան այն սերը որը մենք ունենք Քո հանդեպ

Տուր մեզ, ով Տեր, խոնարհության ընծան, որ արժանի լինենք Քո Նոր Թագավորությանը

Լցրու մեզ Սուրբ Հոգով, որ կարողանանք առաջ գնալ և առաջնորդել Քո բանակը

Քո Սուրբ Խոսքի ճշմարտությունը հռչակելու և մեր եղբայրներին ու քույրերին նախապատրաստելու համար

Երկիր վրա Քո Երկրորդ Գալուստի փառքի համար

Մենք պատվում ենք Քեզ

Մենք գովաբանում են Քեզ

Մենք առաջարկում ենք մեր անձը, մեր վշտերը, մեր տառապանքները՝ որպես ընծա Քեզ, հոգիներ փրկելու համար

ՄԵնք սիրում ենք Քեզ, Հիսուս

Գթա Քո բոլոր զավակներին, որտեղ էլ որ նրանք լինեն:

ԱՄԵՆ:

Նրանց, ովքեր մարտահրավեր են նետում աղոթքի այս յուրահատուկ ընծային, որի մեջ Ես առաջարկում եմ մեղքերի ամբողջական թողություն, նրանք պետք է իմանան հետևյալը:

Ես Հիսուս Քրիստոսն եմ՝ Մարդու Որդին, և Ինձ իշխանություն է տրված ներելու բոլոր մեղքերը:

Իմ սրբազան քահանաներին նույնպես տրվել է մեղքերը ներելու զորությունը Խոստովանության Սուրբ Խորհրդի միջոցով:

Ես խնդրում եմ, որ դուք ընդունեք մեղքերի բացարձակ թողության Իմ ընծան նրանց օգուտի համար, ովքեր չեն կարող ստանալ Խոստովանության Խորհուրդը կամ նրանց, ովքեր Հռոմեական կաթոլիկ եկեղեցու անդամներ չեն:

Մի՞թե դուք այդ թանկագին հոգիներին կզրկեք Իմ ընծայի իրավունքից:

Ինչու՞ եք փորձում հուսաթափ անել այն հոգիներին, ովքեր ընդունում են Իմ մեղքերի թողություն ստանալու Իմ Աստվածային Խոսքը: Մի՞թե կնախընտրեիք, որ նրանք իրենք իրենց չարդարացներին Իմ աչքում:

Դուք պետք է սեր ցույց տաք ձեր եղբայրների և քույրերի հանդեպ և ուրախ լինեք, որ նրանց տրվում է այս յուրահատուկ ընծան Իմ կողմից՝ ձեր սիրող Հիսուսի կողմից:

Նույնիսկ եթե նրանք չկարդան քեզ տրվող Իմ պատգամները, աղջիկս, այդ մեղավորներից յուրաքանչյուրն իրավունք ունի Ինձ խնդրելու, որ ներեմ իրենց երբ իսկապես զղջում են իրենց հոգիներում:

Բացեք ձեր սրտերը և աղոթեք խոնարհության ընծայի համար:

Մի՞թե չգիտեք, որ Սուրբ Հոգին չի կարող մտնել և չի մտնի նրանց հոգիները, ովքեր սրտով կարծրացած են:

Ձեր Աստվածային Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Միավորվեք, մինչ ներս կմտնենք Նոր Դրախտի դարպասներից

Հինգշաբթի, 1 մարտի, 2012թ, երեկոյան ժ 07:55

Իմ սիրելի աղջիկ, Իմ զավակներից շատերը հիմա կփրկվեն Իմ փայփայած հետևորդների աղոթքների և տառապանքի պատճառով, որոնց սերն Իմ հանդեպ ավելին է, քան մարդկության մեծ մասինը:

Այս լարված ժամանակաշրջանում Ես պահում եմ և հենվում Իմ հետևորդների վրա՝ օգնելու փրկել հոգիներ:

Այդ հոգիներից շատերը չեն դիմանա (կենդանի չեն մնա) Իմ Աստվածային Գթասրտության գործողության ժամանակ և կմեռնեն մահացու մեղքի մեջ:

Ձեզանից այնքան շատերն են արձագանքել Իմ կոչին հնազանդությամբ և սրտի առատաձեռնությամբ:

Դուք Ինձ մեծ սփոփանք եք բերում:

Ես օրհնում եմ ձեզ, Իմ սիրելի հետևորդներ, և խնդրում եմ ձեզ, որ շարունակեք աղոթել ուրիշների հոգիների համար:

Շուտով ողջ մարդկությանը կտրվի Իմ Գթասրտության ընծան:

Բոլորը կկարողանան հասկանալ Իմ գոյության ճշմարտությունը: **Բայց ոչ բոլորը կցանկանան գրկել Ինձ նույնիսկ երբ նրանց բացահայտվի ճշմարտությունը:**

Սրանք այն հոգիներն են, որոնց համար Ես տանջվում եմ:

Սրանք այն կորած հոգիներն են, որոնց համար Իմ սիրելի Մայրն արցունքներ է թափում:

Սրանք այն մեղավորներն են, որոնց դուք պետք է օգնեք փրկել, որովհետև Ես ցանկանում եմ փրկել Աստծո բոլոր զավակներին:

Աղոթեք և միավորվեք, օգնելու համար Ինձ միասին փրկել յուրաքանչյուր հոգու, մինչ կմտնենք Դրախտի դարպասներից:

Աղոթքի խաչակրաց արշավանք (35) **Աղոթք հոգիների դրախտ մտնելու համար**

Ով իմ Հիսուս

Օգնիր ինձ՝ օգնելու Քեզ փրկել երկրի վրա քո զավակների մնացորդին

Ես աղոթում եմ, որ Դու քո գթասրտությամբ կփրկես հոգիներին խավարի ոգուց

Ընդունիր այս կյանքում իմ փորձությունները, տառապանքն ու վշտերը՝ դժոխքի կրակներից հոգիներ փրկելու համար

Լցրու ինձ շնորհներով, որ առաջարկեմ Քեզ այս տառապանքները սիրով և ուրախությամբ իմ սրտում, այնպես որ մենք բոլորս միավորվենք որպես մեկ՝ Օրհնյալ Երրորդության հանդեպ սիրո մեջ և ապրենք քեզ հետ Դրախտում՝ որպես մեկ սուրբ ընտանիք:

Ամեն:

Զավակներս, դուք գիտեք, թե որքան շատ եմ Ես ձեզ սիրում:

Դուք, որ ճանաչում եք Ինձ, կհասկանաք Իմ ցավի և տառապանքի խորությունը այն մարդկանց պատճառով, ովքեր մերժում են գթասրտության Իմ ձեռքը:

Միայն դուք ձեր աղոթքների միջոցով կարող եք օգնել այդ հոգիներին և այդպիսով բերել Ինձ այն սփոփանքը, որին Ես տենչում եմ:

Մոտ մնացեք Ինձ հիմա:

Շատ չի մնացել:

Համբերատար եղեք և աղոթեք:

Հանգստացեք, զգացեք Իմ սերը:

Ամեն ինչ լավ կլինի:

Ձեր սիրող Հիսուս Քրիստոս

Հայր Աստված. Նախազգուշացում սատանայական պաշտամունքների և նոր դար ուսմունքի հանդեպ

Ուրբաթ, 2 մարտի, գիշերվա ժ 12:20

Աղջիկս, մարդկության փորձությունները կշարունակեն ավելանալ Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստից առաջ **պահանջվող վերջնական մաքրագործման ընթացքում:**

Երկիրը նախապատրաստվում է այս փառահեղ իրադարձության համար, որը խոստացված է որպես Իմ կողմից ամենամեծ ընծան Դրախտի ստեղծումից ի վեր:

Սպասեք այս իրադարձությանը մեծագույն ակնկալիքով, քանի որ այդ Նոր Դրախտն այն է, ինչին յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա կձգտի:

Նախապատրաստվեք, որպեսզի դուք, ձեր ընտանիքներն ու ընկերները հարմար լինեք քայլելու Իմ Նոր Թագավորությունում, որը կլինի Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի թագավորության ներքո:

Անտեսեք այս խնդրանքը, զավակներս, **և դուք գրավ կդնեք իրավամբ ձեզ պատկանող ժառանգությունը:**

Եթե մեղավորները գեթ մի պահ տեսնեին այդ փառահեղ արարչությունը, ապա նրանք գետնին կընկնեին և գթասրտություն կաղերսեին այդ դարպասներից ներս մտնելու համար:

Միայն նրանք, ովքեր պարզ և մաքուր սեր ունեն Իմ, իրենց Երկնավոր Հոր և Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի հանդեպ, կկարողանան վայելել այդ նոր խաղաղ և փառահեղ գոյությունը:

Տխուր է, սակայն սատանան սևացրել է Իմ զավակներից շատերի սրտերը, որպեսզի նրանք չկարողանան զանազանել ճշմարտությունը հնարովի վիպագրությունից:

Աղջիկս, սարսափելի ստեր են գործում սատանայական պաշտամունքների և նոր դար ուսմունքի կողմից:

Իմ խեղճ զավակները, գայթակղված ստերով, որոնք ծածկված են գունավոր մտախաբությամբ, հավատում են մի նոր մոլորակի:

Նրանց խոստանում են ուրիշ տեսակ դրախտ: Սակայն այն գոյություն չունի:

Երբ սատանան հմայում և գրավում է նրանց սրտերը, ովքեր հավատում են իրեն, նա տանջում է նրանց հավիտյան:

Եթե տեսնեիք այն սարսափը նրանց դեմքերի վրա երբ նրանք, մահից հետո իրենց գտնում են սատանայի ճանկերի մեջ, ձեր սիրտը երկու կես կլիներ:

Այնքան թշվառ են նրանք, որ կարևոր է որպեսզի դուք ասեք այդ հոգիներին իրենց սպասվող չարչարանքների մասին:

Աղոթեք նրանց համար: Երբեք կանգ մի առեք: Շատ դեպքերում միայն զոհաբերվող հոգիների տառապանքը կարող է փրկել նրանց դժոխքից:

Նրանց, ովքեր հավատում են Ինձ՝ Հայր Աստծուն, Ես հիմա կոչ եմ անում ձեզ հրաժարվել կեղծ աստվածներից, կեղծ կուռքերից, կեղծ ուսմունքներից, բախտագուշակներից և նոր դար ուսմունքից, որոնք բոլորն էլ ոչ մի բանի չեն հանգեցնում:

Այդ ամենը ստեղծվել է սատանայի՝ խաբեության թագավորի, խորամանկ ստախոսի կողմից:

Նա ոչ մի բանի առաջ չի կանգնի որ Ինձնից հեռացնի Իմ թանկագին զավակներին:
Ես խնդրում եմ ձեզ, զավակներս, որ աղոթեք այդ հոգիների համար, որպես սփոփանք Իմ՝ ձեր սիրող Հոր հանդեպ:

Սփոփեք Ինձ: Ժամանակի ընթացքում կհասկանաք Իմ Երկնային Թագավորության առեղծվածը:

Ժամանակի ընթացքում Իմ Աստվածային Կամքի խորհուրդը կբացահայտվի:

Ժամանակի ընթացքում, դուք, Իմ հանդեպ ունեցած ձեր հավատարմությամբ և սիրով , կօգնեք Ինձ վերջապես միավորելու Իմ ընտանիքը այն Թագավորության մեջ, որը ստեղծվել էր սկզբից ի վեր Իմ բոլոր զավակների համար:

Շնորհակալ եմ, աղջիկս, քո տառապանքի համար: Շնորհակալ եմ, զավակներս, որ արձագանքում եք Երկնքից տրվող Իմ կանչին:

Ես ձեզ տալիս եմ Իմ բոլոր Օրհնությունը հիմա, բայց դուք պետք է խնդրեք Ինձ.

<<Երկնավոր Հայր, օգնիր ինձ դառնալ փոքր, ինչպես երեխա, Քո աչքում:

Ես խնդրում եմ որ Քո շնորհներն իջնեն ինձ վրա, որպեսզի ես կարողանամ պատասխանել Քո կանչին՝ փրկելու համար Քո բոլոր զավակներին:

Ամեն>>:

Ձեր սիրող Երկնավոր Հայր

Հայր Աստված

Կույս Մարիամ. Արթնացեք, զավակներս: Դուք պետք է գրկեք ճշմարտությունը

Կիրակի, 3 մարտի, 2012թ, ցերեկվա ժ 02:33

Զավակս, Իմ Որդու տառապանքն այսօր հավասար է Նրա այն տառապանքին, երբ Նա երկրի վրա էր:

Ցավը, որը Նա կրեց այն ժամանակ և որը Նրան մեծ տառապանք պատճառեց, Նրա խաչելությունը չէր, այլ այն թե ինչպես մերժեցին Իրեն:

Նրա խոսքն այսօր մերժվում է ճիշտ ինչպես այն ժամանակ էր:

Այսօր Նրան այնպես են ծաղրում, որ այն տառապանքի արցունքներ է բերում ոչ միայն Ինձ՝ Նրա սիրելի Մորը, այլև երկրի վրա Նրա նվիրյալ հետևորդներին:

Որքան վիրավորական է տեսնել, թե Աստծո զավակներից ինչքան շատերն են շրջվել սուրբ խորհուրդներից և եկեղեցու ուսուցումներից:

Այնքան շատ հոգիներ են կորած: Ես խնդրում եմ ձեզ, զավակներս, որ վերցնեք Իմ Որդու խաչը և առաջնորդեք այդ օրինակով:

Գրկեք Իմ Որդուն սրտի պարզությամբ:

Իմ Որդուն սիրելն ու Իմ Հավիտենական Հորը պատվելը շատ պարզ է, զավակներս:

Երբեք մի վերլուծեք Իմ Որդու խոսքը:

Պարզապես հետևեք Նրա ուսուցումներին, որոնք երբեք չեն փոխվել:

Լսեք Իմ Որդու խոսքերը մինչ Նա խոսում է ձեզ հետ հիմա Երկնքից:

Նա կոչ է անում ձեզ նախապատրաստել ձեր հոգիները Իր Երկրորդ Գալուստի համար:

Երբ նա խոսում է ձեզ հետ հիմա, Նա այդ անում է մարդկության հանդեպ Իր ունեցած սիրուց ելնելով:

Նրա Սուրբ Խոսքը կսնի ձեր հոգիները և դրանք նորից ուժեղ կդարձնի:

Մի մերժեք հիմա ձեզ ուղղված Նրա կանչը:

Նա ցանկանում է փրկել ամեն և յուրաքանչյուր հոգու: Բայց այդ անելու համար Նա պետք է հիշեցնի ձեզ ճշտի և սխալի միջև տարբերությունը:

Ձեզանից այնքան շատերին հիմա ուղղություն ցույց չի տրվում, ոչ էլ տեղեկացվում է մեղքի ծանրության մասին:

Հանդուրժողականությունը ձեր հասարակության մեջ և եկեղեցիների ներսում նշանակում է, որ այն, ինչը ձեր կարծիքով նշանակություն չունի, կարող է Աստծո աչքում լուրջ մեղք լինել:

Եկեղեցին մեծ խավարի մեջ է այս ժամանակ, և խաբեբայի թիրախն է եղել շատ տարիներ:

Իմ Որդին պետք է միջամտի և ուղղություն տա ձեզ հիմա, մինչ հերձվածությունը եկեղեցու ներսում շուտով ի հայտ կգա:

Արթնացեք, զավակներս: Դուք պետք է գրկեք ճշմարտությունը:
Աշխարհը հիմա կփոխվի անճանաչելիության աստիճան:

Անցյալում շատ պատգամատարներ են ուղարկվել ձեզ մոտ՝ նախապատրաստվելու համար այդ իրադարձությանը:

Սրանք մարդկությանը տրվող վերջին նախազգուշացումներն են, որպեսզի հնարավորություն տան նրան նախապատրաստվելու Իմ Որդու Մեծ Գթասրտության համար:

Նրա Աստվածային Գթասրտությունից հետո, երբ Նա կբացի ողջ մարդկության աչքերը՝ ականատես լինելու իրենց մեղքերին, Նա մի քիչ ավելի ժամանակ կտա նրանց թողություն խնդրելու համար:

Այդ ժամանակ ձեզ առաջնորդություն կտրվի նախապատրաստելու ձեր հոգիները Քրիստոսի՝ Իմ սիրելի Որդու Երկրորդ Գալուստի համար, ով կգա նորից Փառքով, ինչպես կանխասացվել է:

Մայր Փրկության

Կաթոլիկ եկեղեցին և Իսրայելի տունը կհալածվեն

Կիրակի, 4 մարտի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, կնիքները բացելու ժամանակը, **որը կհանգեցնի որ դու բացես յոթերորդ կնիքը,** համարյա ձեզ վրա է:

Ձեր աղոթքների պատճառով շատ տեղաշարժեր են կասեցվում:

Դուք, Իմ հետևորդներ, ընդունում եք Իմ խաչը և դուք կմիավորվեք Իմ Մոր Անապական Սրտի հետ մինչ կքայլեք դեպի Իմ Փառապանծ Թագավորություն:

Մինչ աշխարհի կեղծիքն ու անբարոյականությունն **աճում է**, կաճի նաև նրանց հավատը, ովքեր առաջնորդում են Իմ բանակը:

Եկեղեցիները կհալածվեն, մասնավորապես Կաթոլիկ եկեղեցին և Իսրայելի տունը:

Շատերը գոհ կլինեն: Այս երկու կրոններին կչարչարեն, և ամեն ջանք գործադրվի, թե արտաքին և թե ներքին, որպեսզի արմատախիլ արվեն վերացվեն դրանց բոլոր հետքերը:

Մեծ ուրախություն կլինի աշխարհում, երբ նրանք ընկնեն:

Շատերը կհամարեն դրանք ոչնչացած: Այդ ժամանակ մարդիկ կարհամարհեն նրանց դիակները:

Բայց դա հիմարություն կլինի: **Քանի որ նրանք նորից կբարձրանան, որ կազմեն Նոր Երկինքն ու Նոր Երկիրը մինչ Իմ Դրախտի դարպասները կբացվեն:**

Ոչ մեկը չի կարող ոչնչացնել և չի ոչնչացնի երկրի վրա Իմ ընտրյալ ժողովրդին:

Նրանք ցավ կպատճառեն, կտանջեն, կմեռցնեն և կքանդեն այն շենքերն ու տաճարները, որ ստեղծվել են Իմ Հորը պատվելու համար:

Բայց հետո նրանք կբարձրանան և կպահանջեն իրավամբ իրենց պատկանող գահերը, երբ կթագավորեն Ինձ հոտ Դրախտում:

Երբեք մի մերժեք Աստծուն:

Երբեք մի մերժեք Նրա եկեղեցիները:

Քանի որ եթե այդպես անեք, ապա կհետևեք դեպի հավիտենական դատապարտություն տանող խաբեության ճանապարհին:

Ձեր Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Ճշմարտության Գիրքը բացահայտվում է քեզ՝ վերջին ժամանակների յոթերորդ պատգամատարին:

Երկուշաբթի, 5 մարտի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, Այսօր Ես գալիս եմ սփոփելու քեզ տառապանքի այս ժամին, որը տեղում է քեզ վրա ամեն կողմից:

Իմացիր, որ Հովհաննես Ավետարանչին տրվել էր չկնքված գիրքը – ճշմարտության գիրքը – որպեսզի աշխարհը լսի հիմա այս ժամանակներում:

Այս գիրքը տրվեց նրան արդեն առանց կնքված լինելու, քանի որ կնիքներն արդեն բացված էին: Այդ ժամանակ դրանք կնքվեցին և չպետք է բացահայտվեին մինչև վերջը:

Եկել է այդ ժամանակը, որ դու բացես Ճշմարտության Գիրքը և բացահայտես նրա բովանդակությունը Աստծո բոլոր զավակներին, որ նախապատրաստեն իրենց հոգիները հավիտենական կյանքի համար:

Ճշմարտության Գիրքը բացահայտվում է քեզ՝ վերջին ժամանակների յոթերորդ պատգամատարին:

Քո ձայնի հնչմամբ ճշմարտությունը վերջնականապես կբացահայտվի և Հայտնության Գրքում պարունակվող առեղծվածները կներկայացվեն չհավատացող աշխարհին:

Բայց շատ չի մնացել: Չնայած ուրացությանը, որը կազդի ոչ միայն հավատացողների, այլև եկեղեցու սրբազան սպասավորների վրա, մեծ խոստովանության ժամանակը մոտ է:

Հենց որ դա տեղի ունենա, աշխարհով մեկ մեծ դարձ կլինի:

Այդ ժամանակ նրանք քաղցած կլինեն չկնքված գրքում պարունակվող ճշմարտության հանդեպ, խոստացված աշխարհին այս վերջին ժամանակների համար:

Դու այն պատգամատարն ես, որին առաջադրանք է տրվել ոչ միայն նախապատրաստել աշխարհը հոգիների փրկության համար, այլև հայտարարել Իմ թագավորումը:

Ձեր սիրող

Հիսուս Քրիստոս

Տեսեք թե հիմա խաղաղության մարդն ինչպես կներկայանա աշխարհին

Երեքշաբթի, 6 մարտի, 2012թ, ցերեկվա ժ 03:20

Իմ սիրելի աղջիկ, դու պետք է շարունակես կատարել Իմ ամենասուրբ ցուցմունքները, և ոչ մչ մարդ թող քեզ չկանգնեցնի այս առաքելության մեջ, չնայած քեզ վրա կշարունակեն հարձակվել բոլոր կողմերից:

Երբեք մի կասկածիր Իմ խոսքին, նույնիսկ եթե չես հասկանում թե Իմ պատգամներն ինչ ի նկատի ունեն:

Այն ամենն, ինչ քեզ տրվում է, որ աշխարհը լսի, կանխասացվել է, աղջիկս:

Դա այն է ինչ մարդկությունը կարիք ունի հասկանալու, թե ինչ է պարունակվում Հովհաննու գրքում:

Կանխասացված ամեն ինչ պետք է կատարվի:

Տեսեք հիմա, թե խաղաղության մարդը ինչպես կներկայանա աշխարհին:

Նրան կտեսնեն Միջին Արևելքում խաղաղություն ստեղծելիս:

Դա կլինի կեղծ խաղաղություն և պատրվակ է այն ստի համար, որը նա կներկայացնի՝ թաքցնելու համար այն կեղծիքի իսկական պատճառը, որը հիմա նյութվում է:

Աղոթեք Իմ սուրբ երեց Բենեդիկտ Պապի համար, քանի որ նրան սարսափելի հալածանք է սպասվում: Այդ ժամանակը մոտ է հիմա:

Աղոթեք բոլորդ, որովհետև ձեր աղոթքները կթեթևացնեն այս ժամանակների խստությունը, որը կարելի է թուլացնել:

Շատ բան հայտնի չէ, աղջիկս, վերջին ժամանակների մասին:

Շատերն են վախով լի, և այդպես էլ պետք է լինի, բայց միայն այն դեպքում, եթե նրանց հոգիները մաքուր չեն:

Ձեզանից նրանք, ովքեր Աստծո լույսի մեջ են, դուք շատ բան պետք է ակնկալեք, որովհետև դա կնկշանակի երկրի վրայից մեղքի վերացում:

Վերջապես աշխարհը կմխրճվի մի նոր սկզբի մեջ՝ լցված Իմ լույսով:

Շատ ժամանակ չի մնացել նախքան այս բաները կկատարվեն:

Միակ բանը որ կարևոր է այն է, որ Աստծո զավակները կտեսնեն ճշմարտությունը ժամանակին և դարձի կգան:

Այլ կերպ նրանք չեն լինի Նոր Երկնքի և Նոր Երկրի մասը, որը կմիավորվի մեկ դառնալու համար:

Քանի որ այդ ժամանակ Ես կգամ դատելու:

Ուստի միայն նրանք կյանք կունենան, ովքեր ընդունում են Ինձ՝ իրենց Փրկիչ Հիսուս Քրիստոսին և Իմ Հավիտենական Հորը:

Աղոթեք ձեր բոլորի հոգիների համար: Սա այն ամենն է, ինչի վրա պետք է կենտրոնացնեք ձեր ուշադրությունը հիմա, և վստահեք Ինձ ամբողջապես:

Ձեր Հիսուս

Առաջին կնիքը հավատի ուրացությունն է

Չորեքշաբթի, 7 մարտի, 2012թ, ցերեկվա ժ 03:40

Իմ սիրելի աղջիկ, ասա Իմ զավակներին, որ ոչ մի մարդ չունի գիտելիքը և իշխանությունը՝ բացահայտելու Հայտնության Գրքում պարունակվող ճշմարտությունը:

Անկախ նրանից, թե նրանք իրենց որքան գիտակ կհամարեն, միայն Ես՝ Հիսուս Քրիստոսը, մարդկության Փրկիչն ու Ազատարարը ունեմ իշխանությունը բացահայտելու աշխարհին թե ինչ է պարունակվում Ճշմարտության Գրքի մեջ:

Միայն Ես՝ Աստծո Գառս, իրավունք ունեմ այսօր աշխարհին հայտնելու ճշմարտությունը տրված Իմ աշակերտ Հովհաննես Ավետարանչին՝ ճշմարտության գործիքին:

Առաջին կնիքը հավատի ուրացությունն է, որը ոչ միայն չհավատացողների մոտ է երևում, այլև նրանց մեջ, ովքեր հռչակում են, թե ճանաչում են Ինձ և նրանց, ովքեր հրապարակայնորեն հայտարարում են Իմ հանդեպ իրենց սերը:

Սա այն ժամանակն է, երբ ճշմարիտ հավատը կշրջվի, երբ ձեզ, զավակներս, ներկայացնեն մի ջրասույզ արված վարդապետություն, որը մի վիրավորանք է Իմ ուսուցումների հանդեպ:

Ես ասում եմ ձեզ, զավակներս, որ երբ տեսնեք հայտնվող նոր կեղծ հավատնքեր և կրոնական ուսմունքներ, ապա կիմանաք, որ դա առաջին կնիքի բացահայտման ժամանակն է:

Նայեք ձեր շորջբոլորը, ի՞նչ եք տեսնում: Կրոններ, որոնք պատվում են նոր աստվածների, որոնց մասին երբեք չեք լսել: Գիտաֆանտաստիկ հողի վրա հիմնված կրոններ, որոնք հանգեցնում են հիմարության և դատարկ են նյութապես: Հոգևոր սուբյեկտներ, որոնք այս աշխարհից չեն, սակայն որոնք շատերի հավատացմամբ ներկայացնում են Իմ Հոր Երկնային Թագավորությունը:

Ուշ դարձրեք հիմա, քանի որ դուք ապրում եք երևակայության մեջ:

Այս վերացական /մետաֆիզիկական/ հավատքներից ոչ մեկը չի ներկայացնում ճշմարտությունը:

Ցանկացած վարդապետություն, որը ձեզ սովորեցնում է ինքներդ ձեզ մնացած ամեն ինչից առաջ դնելու կարևորությունը, մի վարդապետություն է, որ դուրս է գալիս սատանայից:

Մի լսեք: Շրջեք ձեր մեջքը այդ դաժան խաբեության հանդեպ:

Նրանք, ովքեր փնտրում են կեղծ աստվածներ և նվիրաբերում իրենց կյանքը կեղծ աստվածներ պաշտելով, կորած են Ինձ համար:

Մինչև կանգ չառնեք և չաղոթեք Ինձ առաջնորդության համար, Ես չեմ կարող փրկել ձեզ:

Դուք և բոլոր նրանք, ովքեր գիտակցաբար հետ կքաշվեն խավարի թագավորից հիմա, ձեզ կտրվի զանազանության ընծան, եթե դուք Ինձ խնդրեք այս Խաչակրաց աղոթքի արշավանքի մեջ (36) **Օգնիր ինձ պատվել ճշմարիտ Աստծուն.**

Հիսուս օգնիր ինձ, քանի որ ես կորած եմ և շփոթված

Ես չգիտեմ մահից հետո կյանքի մասին ճշմարտությունը

Ներիր ինձ եթե ես վիրավորում եմ Քեզ՝ պատվելով կեղծ աստվածների, որոնք ճշմարիտ Աստվածը չեն

Փրկիր ինձ և օգնիր ինձ տեսնել ճշմարտությունը պարզությամբ և փրկիր ինձ իմ հոգու խավարից: Ամեն:

Միայն մեկ Աստված կա. Հայրը, Որդին և Սուրբ Հոգին՝ մեկ Սուրբ Երրորդության մեջ:

Ցանկացած այլ աստված գալիս է սատանայից, անկախ նրանից, թե որքան գրավիչ է պատրվակը:

Խնդրում եմ, մի կորցրեք ձեր հավիտենական կյանքը՝ ձեր հավատարմությունը նվիրելով այն հավատներին, որոնք պատվում են նոր դարի պրակտիկան, ներառյալ ռեյկին, յոգան, նոր դարի մեդիտացիան, տարոտ կարտերը, խորաթափանցությունը, հոգեբանական ընթերցումները և բարձրացած տերերի հետ կապված հրեշտակների պաշտամունքը:

Խորհրդավորի (օկուլտ) այս պրակտիկաները դանդաղորեն, սակայն վստահությամբ շարունակում են ընդունվել ոչ միայն ձեր հասարակության, այլև կաթոլիկ և քրիստոնյա եկեղեցիների կողմից:

Այդ կեղծ կրոնական ուսմունքները այնքան արագորեն են տարածվում, որ կլանել են բյուր միլիոնավոր Աստծո զավակների, ովքեր հիմա այնքան շատ կեղծ սփոփանք են գտել դրանց մեջ, որ այլևս չեն ճանաչում մեկ ճշմարիտ Աստծո գոյությունը:

Ձեր Հիսուս

Իմ Երկրորդ Գալուստը չի կարող արգելվել, ոչ էլ այն կարող է կանգնեցվել

Չորեքշաբթի, 7 մարտի, 2012թ, երեկոյան ժ 08:30

Իմ սիրելի աղջիկ, Ես կպաշտպանեմ քեզ այն հատուկ շնորհներով որոնք անհրաժեշտ են քեզ, որպեսզի զորություն ունենաս չար ուժերի դեմ, որոնք հիմա գաղտնաբար պատարաստվում են կանգնեցնել այս առաքելությունը:

Կարևոր է հասկանալ, որ մարդկային կարծիքը կարևոր չէ:

Կարևորը միայն Իմ Ամենասուրբ Խոսքն է:

Իմ Խոսքը ճշմարտությունն է: Ես ճշմարտությունն եմ: Ով էլ որ քեզ ասի, թե այս պատգամները չեն համապատասխանում Իմ ուսուցումներին, ստախոս է:

Նրանք չեն ճանաչում Ինձ: Նրանք կարող են մտածել, թե ճանաչում են, բայց կարող եմ Ինձ ճանաչել միայն այն դեպքում, երբ մնան սրտով խոնարհ:

Նրանք, ում կարծիքը հակառակ է Իմ Խոսքին, մեղավոր են հպարտության մեղքի մեջ:

Հպարտությունը կուրացնում է նույնիսկ Իմ հավատարիմ սպասավորներին Իմ Սուրբ Խոսքի հանդեպ:

Մարդկությանը տրված Իմ խոստումները՝ նորից գալու մասին, որ դատեմ կենդանիներին ու մեռածներին, պետք է կատարվեն:

Սա, Իմ Երկրորդ Գալուստը, չի կարող արգելվել, ոչ էլ կանգնեցվել:

Մարդկությանը տրվող Իմ նախազգուշացումները, այն պատճառով, որ Ես սիրում եմ յուրաքանչյուր հոգու, կարևոր են:

Ես պետք է ինչպես հարկն է նախապատրաստեմ Աստծո բոլոր զավակներին այս ամենափառահեղ իրադարձության համար:
Շատերը կփորձեն խանգարել քեզ: Շատերը կփորձեն վնասել Իմ Սուրբ Խոսքին, և շատերը կփորձեն վնաս պատճառել քեզ, որպեսզի արգելեն Իմ Սուրբ Խոսքը լսվելուց:

Այդ բոլոր փորձերն անօգուտ կլինեն:

Միայն Ես՝ Հիսուս Քրիստոսն ունեմ զորություն ողջ մարդկությանը հավիտենական փրկություն ապահովելու:

Միայն Ես ունեմ զորությունը՝ նախապատրաստելու մարդկության հոգիները Դրախտում իրենց ժառանգության համար:

Ոչ մեկը, նույնիսկ Սատանան և նրա զինակիցները, չեն կարող կանգնեցնել դա տեղի ունենալուց:

Միշտ հիշեք սա: Ես կպաշտպանեմ բոլոր նրանց, ովքեր ապրում են Իմ Սուրբ Խոսքի մեջ:

Դուք կվախենաք այն գլոբալ իրադարձություններից, որոց հետևանքով խավարի ուժերը կպարուրեն ձեր երկրները:

Այդ իրադարձությունները կարող են վհատեցնող լինել, բայց դուք երբեք չպետք է վախենաք, քանի որ Ես կբերեմ ձեզ Ինձ հետ երկրի վրա Իմ Նոր Թագավորություն:

Ես միայն խնդրում եմ, որ վստահեք Ինձ:

Թույլ տվեք ինձ ուղղություն տալ ձեզ:

Թույլ տվեք Ինձ ցույց տալ ձեզ ճանապարհը, որ մաքրագործեք ձեր հոգիները Աղոթքի խաչակրաց արշավանքների միջոցով, որոնք Ես տալիս եմ ձեզ:

Հետո ամեն ինչ թողեք Ինձ:

Հիշեք, որ ձեր բոլորիդ հանդեպ Իմ ունեցած սերն այնքան հզոր է, որ ոչ մի մարդ երբեք չի կարող թուլացնել այդ մաքուր սերը և կարեկցանքը, որը Ես ունեմ Աստծո յուրաքանչյուր զավակի հանդեպ Իմ Սուրբ Սրտում:

Ձեր սիրող Հիսուս

Մարդկության Ազատարար

Իմ Պաշտպանության Կնիքը կանխասացվում է, մինչ կոտրվում է երկրորդ կնիքը

Հինգշաբթի, 8 մարտի, 2012թ, երեկոյան ժ 07:52

Իմ սիրելի աղջիկ, աշխարհը սպասել է այս պահին երկու հազար տարի:

Ոմանք՝ վախով իրենց սրտերի մեջ, ոմանք՝ ակնկալությամբ և տարակուսանքով, թե երբ կգա այդ պահը, և հիմա այդ պահը եկել է:

Սա այն ժամանակն է, երբ Ես ուղարկում եմ վերջին ժամանակների Իմ մարգարեին, քեզ՝ Մարիա, որ վերջապես ներկայացնես Ճշմարտության Գիրքը, որը բացահայտում է Հայտնության Գրքի բովանդակությունը:

Ես այն Աստվածն եմ, ում Իմ բոլոր զավակները կանչում են այս սարսափելի ժամանակներում:

Ինձ է, որ Իմ սիրելի զավակները պետք է կանչեն հիմա:

Ես հավաքում եմ Իմ ընտանիքը հիմա, այնպես որ կարողանք միավորվել վերջնական մարտում՝ սպանելու համար վիշապին, ով այնքան երկար ժամանակ չարչարել է երկիրը:

Զավակներս, մի վախեցեք: Ոչ մի վնաս չի հասնի նրանց, ովքեր կրում են Իմ Կնիքը՝ Կենդանի Աստծո Կնիքը:

Սատանան և նրա ընկած հրեշտակները, ովքեր ներթափանցել են աշխարհ այս ժամանակ, **իշխանություն չունեն նրանց վրա, ովքեր ունեն Կենդանի Աստծո նշանը:**

Դուք պետք է լսեք Ինձ զավակներս, և ընդունեք Իմ Կնիքը, քանի որ այն կփրկի ոչ միայն ձեր կյանքը, այլև ձեր հոգին:

Ասեք այդ աղոթքը, որ ստանաք Իմ Կնիքը ամեն օր* (տես պատգամի վերջում)

Համոզվեք, որ ձեր ընտանիքի յուրաքնաչյուր անդամ և ձեր սիրելիները հասկանան Իմ Կնիքի կարևորությունը:

Ձեր սերն Իմ հանդեպ՝ ձեր Երկնավոր հոր հանդեպ, կլինի ձեր փրկարար շնորհը, և այն կտա ձեզ այն զորությունը, որի կարիքն ունեք:

Իմ Պաշտպանության Կնիքը կանխասացվում է, մինչ կոտրվում է երկրորդ կնիքը:

Կարմիր ձիավորը այն վրիժառու չար հրեշտակն է, ով կսպանի Իմ զավակներին գալիք բազմաթիվ պատերազմներում: Սակայն նա կանցնի Իմ այն զավակների կողքով, ովքեր իրենց ճակատներին ունեն կնիքը:

Նախապատրաստվեք հիմա, քանի որ այդ պաատերազմներն արդեն տեղի են ունենում, և ավելի շատերն են նախապատրաստվում երկրի յուրաքանչյուր անկյունում, հատկապես Միջին Արևելքում և այն երկրներում, որտեղով Իմ թանկագին Որդին՝ Հիսուս Քրիսոսը քայլել է երկրի վրա Իր գտնվելու ժամանակ:

Ձեր սիրող Հայր

Ամենաբարձրյալ Աստված

*Պաշտպանության Կնիքի աղոթքը՝ Հայր Աստծուն (ստացված Մարիա Աստվածային Գթասրտության կողմից 2012թ. փետրվարի 20-ին)

Ասացեք այս խաչակրաց արշավանքի աղոթքը (33) Իմ Կնիքը ճանաչելու և այն սիրով ու երախտագիտությամբ ընդունելու համար:

Ով Աստված իմ, Իմ սիրող Հայր

Ես սիրով և երախտագիտությամբ ընդունում եմ

Պաշտպանության Քո Աստվածային Կնիքը

Քո Աստվածայնությունը ներառում է իմ մարմինն ու հոգին հավերժությունը

Ես խոնարհվում եմ խոնարհ շնորհակալությամբ և առաջարկում Քեզ իմ խորը սերն ու հավատարմությունը

Քեզ՝ իմ Սիրելի Հայր,

Ես խնդրում եմ Քեզ պաշտպանել ինձ և իմ սիրելիներին այդ հատուկ Կնիքով

Եվ ես իմ կյանքն եմ նվիրում Քո ծառայությանն ընդմիշտ

Ես սիրում եմ Քեզ սիրելի Հայր

Ես սփոփում եմ Քեզ այս ժամանակներում սիրելի Հայր,

Ես առաջարկում եմ Քեզ Քո սիրելի Որդու Մարմինը, Արյունը, Հոգին և Աստվածայնությունը

Աշխարհի մեղքերի քավության և Քո բոլոր զավակների փրկության համար:

Ամեն:

Կույս Մարիամ. Աղոթեք Վարդարանը բոլոր ազգերի համար այժմվանից մինչև Զատիկի կիրակի

Ուրբաթ, 9 մարտի, 2012թ, երեկոյան ժ 07:15

Իմ քաղցր զավակ, ինչպես եմ Ես ողբում, մինչ տեսնում եմ թե ինչպես է ատելությունը բարձրանում ոչ միայն քո դեմ, այլև Իմ Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Խոսքի հանդեպ:

Հիմա դու գիտես, թե Նա ինչպես տառապեց Գեթսեմանիի պարտեզում և թե ինչպես է նա դեռևս տառապում այսօր երբ չարը խանգարում է Իր կողմից հոգիներ փրկելու ցանկացած ջանք:

Մինչ հիմա պատերազմներ են նյութվում, կարևոր է որ Իմ Սուրբ Վարդարանի աղոթքն ասվի ամեն օր՝ նախքան Զատիկը:

Զավակներս, եթե շաբաթվա յուրաքանչյուր օր նվիրաբերեք Իմ Սուրբ Վաարդարանին՝ ուրբաթ օրերին ասելով չորս խորհուրդները, այժմվանից մինչև Զատիկ, աշխարհում շատ ավերածություն կարող է մեղմացվել և կմեղմացվի:

Իմ Որդին այնքան երջանիկ է նրանցով, ովքեր ընդունում են Իր Սուրբ Խոսքը սիրով և սրտի մաքրությամբ:

Մեծ շնորհներ են հեղվում այդ մաքուր հոգիների վրա, ովքեր ամբողջապես վստահում են Նրան առանց որևէ կասկածի իրենց սրտերում:

Դուք, զավակներս, այն մնացորդն եք, **հավատացողների այն փոքր խումբը, ովքեր կօգնեն մեծացնելու բանակը,** որը հիմա պահանջվում է աշխարհում չարը վերացնելու համար:

Ձեր աղոթքները, և հատկապես Իմ Ամենասուրբ Վարդարանը, այն զենքերն են, որոնք անհրաժեշտ են ոչնչացնելու համար չարին և նրանց, ում չարը վարակում է երկրի յուրաքանչյուր անկյունում:

Գնացեք հիմա, զավակներս և **կազմակերպեք գլոբալ աղոթքներ, որպեսզի Իմ Վարդարանն աղոթեն բոլոր ազգերի համար՝ այժմվանից մինչև Զատիկի կիրակի:**

Գնա խաղաղությամբ, զավակս: Հիմա քեզ տրվող շնորհները կօգնեն քեզ դիմակայելու սատանայի ամենօրյա գրոհներին և նրա զայրույթին, որն ավելանում է այս աշխատանքի հետ:

Ձեր Երկնավոր Մայր

Մայր Փրկության

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս պատճառով մենք պլանավորել ենք Վարդարանի գլոբալ աղոթք մեր աղոթքի ինտերնետային խմբում, յուրաքանչյուր ուրբաթ օր, որը կընդգրկի բոլոր չորս խորհուրդները, իսկ Վարդարանի ամենօրյա աղոթքը կասվի ամեն օր այժմվանից մինչև Զատիկ:

Վարդարանի ավելի երկար տարբերակի համար նշված ուրբաթ օրերը մարտի 16-ը, 23-ը և 30-ն են, ապրիլի 6-ը (Ավագ ուրբաթ) և ապրիլի 13-ը (Աստվածային Գթասրտության կիրակի օրվան նախորդող ուրբաթ օրը և Աստվածային Գթասրտության աղոթքն ասելու 8-րդ օրը):

Ավելի մանրամասն տեղեկատվության համար այցելեք մեր ինտերնետային էջը http://www.internetgebetskreis.com/en/

Երկրորդ կնիքը բացելու ժամանակը՝ մինչ պատերազմներն ավելանում են

Շաբաթ, 10 մարտի, 2012թ, ցերեկվա ժ03:30

Շաբաթ, 10 մարտի, 2012թ, ժ 15:30

Իմ սիրելի աղջիկ, **ժամանակն է բացելու երկրորդ կնիքը մինչ պատերազմները կավելանան և կտարածվեն:**

Վրիժառու մութ հրեշտակը դուրս է գալիս, աղջիկս, և այդ պատերազմները բոլորը միմյանց փոխկապակցված են:

Դրանք տեղի չեն ունենում տարածաշրջանային անհանգստությունների պատճառով, դրանք պլանավորվել են Արևմուտքի կողմից:

Այդ պատերազմները սանձազերծվել են միտումնավոր կերպով՝ վերահսկելու համար, և այդ ազգերից շատերն են պատկերվում որպես չար՝ իրենց քաղաքական առաջնորդների վերաբերյալ ստերի տարածման հետ մեկտեղ:

Զավակներս, այդ պատերազմները խորամանկորեն սկսել են, բոլորը միանգամից, որի նպատակն է հեռացնել առաջնորդներին մեկը մյուսի ետևից:

Խաղաղ լուծումներ կներկայացվեն և դրանց կծափահարեն, սակայն դրանք կեղծ են:

Ձեզ, զավակներս, խաբում են:

Պատերազմի մասին լուրը սոսկ լուր է: Ինչպե՞ս են լուրերը սկիզբ առնում: Ո՞վ է սկսում դրանք և ինչու՞:

Ձեր կարծիքով ինչու՞ են այդքան շատ երկրներ ներգրավվել այդ պատերազմի մեջ միաժամանակ:

Սա զուգադիպություն չէ:

Կազմակերպված պլան կա Հակաքրիստոսի կողմից՝ վերահսկել և նվաճել այն ազգերին, որոնք ունեն հարուստ ռեսուրսներ:

Հենց որ նրանք վերահսկեն այդ երկրներին, նրանք չափազանց ուժեղ կդառնան:

Մինչ այս պատերազմներն ավելանում են և դառնում հոգնեցուցիչ, **հակաքրիստոսն իրեն հայտնի կդարձնի և իրեն ճանաչել կտա որպես խաղաղ միջնորդ:**

Ձեզանից շատ քչերին է ասվում ճշմարտությունը այն վերահսկողության պատճառով, որ հակաքրիստոսն ու նրա կազմակերպություններն ունեն հաղորդակցության աշխարհում:

Աղոթեք հիմա, մինչ պատերազմներն ավելանում են, որ նրանց պլաններն անպտուղ մնան:

Իմացեք, որ Իսրայելը, որի վրա Արևմուտքն ուժեղ ազդեցություն ունի, կմերժվի և ԱՄՆ-ը կդավաճանի նրան այն ժամանակ, երբ իրենք ամենաքիչը կսպասեն դա:

Այդ ժամանակ է, որ տեղի կունենա այն հոլոքոսթը, որի մասին Ես խոսում եմ:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք Իսրայելի ժողովրդի համար, ովքեր կշարունակեն տառապել իրենց մեղքերի համար մինչև Իմ Երկրորդ Գալուստը:

Ձեր սիրող Հիսուս

Կույս Մարիամ. Նախկինում երբեք այսքան շատ ընդդիմություն չի եղել աստվածային հայտնությունների հանդեպ

Երկուշաբթի, 12 մարտի, 2012թ, երեկոյան ժ 07:00

Զավակս, այս ժամանակ է, որ Աստծո տեսանողները և ընտրյալ հոգիները կկրեն ամենամեծ հալածանքը:

Սատանայի օրերը համայա վերջացել են, և նա կօգտագործի ցանկացած զենք, հատկապես որոշ սրբազան քահանաների, որ փորձի և վարկաբեկի Իմ՝ ձեր սիրող Մոր և Իմ թանկագին Որդի Հիսուս Քրիստոսի խոսքը:

Նախկինում երբեք այդքան շատ ընդդիմություն չի եղել աստվածային հայտնությունների հանդեպ, ինչպես այսօր է:

Խավարը շարունակում է նվաճել Եկեղեցին և շատերը **Եկեղեցու ներսից անում են իրենց կարողացածը, որպեսզի հարցականի տակ դնեն տեսանողների խոսքը:**

Նրանք չեն ցանկանում, որ ճշմարտությունը ներս մտնի և կխանգարեն, որպեսզի հոգիներ փրկելու նպատակով տեսանողներին տրված աղոթքները հրապարակայնացվեն:

Աղոթեք, զավակներս, որ նրանց ջանքերը չխոչընդոտեն Իմ Որդու աշխատանքին, ոչ էլ կուրացնեն հավատացողներին Սուրբ Հոգու ընծայի հանդեպ, որը շարունակում է հեղվել այն հոգիների վրա, ովքեր տեսնում են այս պատգամները:

Ձեր աղոթքներն ու հավատարմությունն Իմ թանկագին Որդուն երբեք այդքան կարևոր չեն եղել մինչ **խավարի այդ ամպը շարունակում է իջնել Իմ Որդու Եկեղեցու վրա:**

Աղոթեք, աղոթեք, աղոթեք, որ Իմ Որդու Լույսը փայլի, որպեսզի կորած հոգիները կարողանան լուսավորվելՆրա Ամենասուրբ Խոսքի միջոցով:

Շնորհակալ եմ, որ պատասխանեցիր կանչիս, զավակս, հատկապես քո հոգում եղած այս մեծ տխրության ժամանակ, որին դիմանում ես և որը ստացել ես նրանց ձեռքից, ովքեր իրենց համարում են Տիրոջ անունից խոսողներ:

Ձեր Երկնավոր Մայր

Մայր Փրկության

Հիմա համախմբված ջանք է գործադրվում Իմ եկեղեցու մի որոշակի մասի կողմից՝ լռեցնելու քեզ

Երեքշաբթի, 13 մարտի, 2012թ, երեկոյան ժ 06:30

Իմ սիրելի աղջիկ, այսօր դու վերջապես հասկացար, թե որքան շատ են ոչ միայն հակառակվում Իմ Ամենասուրբ Խոսքին, այլև այն **մերժվում է Իմ Եկեղեցու որոշ անդամների կողմից:**

Նրանք, ովքեր հարմար չեն ընկնել Իմ ոտքերը և գթասրտություն աղերսել, իրենց հարմար են հայտարարում դատելու Իմ սրբազան խոսքերը, որոնք տրվում են մարդկությանը իրենց հոգիները փրկելու համար:

Ես մի Աստված եմ՝ լի գթասրտությամբ, լի ցանկությամբ՝ փրկելու Իմ բոլոր զավակներին և դանդաղ եմ բարկանալու մեջ:

Այսօր Իմ համբերությունը փորձության ենթարկվեց, երբ մեկ այլ վիրավորանք, այս անգամ մի մարդու կողմից, ով խոսում է Իմ անունից, հասցվեց՝ այս պատգամները վարկաբեկելու համար:

Դու, աղջիկս, այսօրվանից սկսած, գործ չունենաս այդպիսի ներկայացուցիչների հետ, առանց նախապես Իմ թույլտվությունը հարցնելու:

Հիմա համախմբված ջանք է գործադրվում Իմ եկեղեցու մի որոշակի մասի կողմից՝ լռեցնելու քեզ:

Զավակներս, սրանք այն ժամանակներն են, երբ Իմ ամենաջերմ հետևորդները, ներառյալ Իմ Եկեղեցու անդամները, փորձության կենթարկվեն այնպիսի ձևով, որը չի եղել Իմ խաչելությունից ի վեր:

Ճիշտ ինչպես Ինձ հետ վարվեցին թշնամաբար և արհամարհեցին ճշմարտությունը խոսել համարձակվելու համար, երբ Ես եկա առաջին անգամ, այդ նույն վերաբերմունքը կտարածվի նույն կերպ Իմ մարգարեների հանդեպ Իմ Երկրորդ Գալուստի նախօրեին:

Նրանց կծաղրեն, կծիծաղեն նրանց վրա և հիմարի տեղ կդնեն, երբ նրանք տարածեն Իմ խոսքը:

Նրանք կմեղադրվեն հերետիկոսության մեջ նրանց կողմից, ովքեր հռչակում են Իմ ուսուցումները, սակայն չեն կարողանում ճանաչել այսօր աշխարհին տրվող Իմ խոսքը:

Վախեցեք, դուք, ովքեր փորձում եք փակել այն ուղին, որը Ես հիմա գցում եմ ձեր առջև մարդկությանը փրկելու համար:

Դուք կպատժվեք:

Դուք ստիպված կլինեք պատասխան տալ Ինձ այն անարդարության համար, որը բանեցնում եք նրանց նկատմամբ, ովքեր ուղարկված են հռչակելու Աստծո խոսքը այս ժամանակ՝ վերջին ժամանակներում:

Մերժեք Տիրոջ մարգարեներին, և դուք կմերժեք Տիրոջ խոսքը:

Ձեր ամբարտավանությունը կուրացնում է ձեզ ճշմարտության հանդեպ, և դուք իրավունք չունեք Ինձ ներկայացնելու:

Դուք խորապես վիրավորում եք Ինձ, և Իմ սուրբ խոսքի մերժումը ձեր կողմից խորապես վիրավորում է Ինձ:

Ես ողբում եմ նրա համար, որ դուք դաժանորեն մերժում եք Ինձ, մինչ միևնույն ժամանակ, քարոզում եք Իմ ուսուցումների ջրասույզ արված տարբերակը:

Հիմա դուք պետք է ժամանակ անցկացնեք Հաղորդության Պաշտամունքի մեջ նախքան կկարողանաք հաղորդակցվել Ինձ հետ, որպեսզի Ինձ հնարավորություն տաք առաջնորդել ձեզ զանազանության ուղիով:

Քննեք Իմ խոսքերը մերժելու ձեր պատճառները:

Դա այն պատճառո՞վ է, որ չեք ցանկանում լսել հերձվածության մասին ճշմարտությունը, որը պատրաստվում է բռնել կաթոլիկ եկեղեցուն:

Դա այն պատճառո՞վ է, որ չեք ցանկանում ընդունել, որ Եկեղեցին թունավորվել է խաբեբայի կողմից:

Մի՞թե չեք հասկանում, որ այս ամենը կանխասացվել է:

Դուք պետք է աղոթեք, որ տեսնեք ճշմարտությունը և գաք Ինձ մոտ առաջնորդության համար, նախքան չափազանց ուշ կլինի:

Ձեր Հիսուս

Ողջ մարդկության Ազատարար

Սերն ավելի զորեղ է, քան ատելությունը

Չորեքշաբթի, 14 մարտի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, Ես ամուր գրկել եմ քեզ Իմ գրկում, մինչ դիմանում ես այս ցավին Ինձ հետ միության մեջ:

Իմ զավակները, և հատկապես Իմ հետևորդները, միմյանց հանդեպ զգում են մի այնպիսի քնքշություն, որը չեն կարողանում բացատրել:

Նրանք կարող են լինել օտարականներ, որ ապրում են աշխարհի հակառակ կողմերում, սակայն սերը, որ նրանք զգում են, Իմ սերն է:

Նրանք այնպես են սիրում միմյանց ինչպես բնական քույրերն ու եղբայրները՝ ցանկացած սիրող ընտանիքի մեջ:

Ես այն լույսն եմ, որ ստեղծում է այդ ինքնաբուխ սերը, որը միմյանց է մոտեցնում հոգիներին:

Իմ Սուրբ Հոգին է, որը միավորում է Աստծո բոլոր զավակներին միասին որպես մեկ ընտանիք:

Դուք, զավակներս, Իմ ընտանիքն եք:

Սուրբ Երրորդությունը գլխավորում է այդ ընտանիքը, և երբ ձեր սերը մաքուր է և խոնարհ, դուք ինքնաբերաբար այդ ընտանիքի մասն եք դառնում:

Հոր սերն Իմ միջոցով է:

Երբ դուք սիրեք Ինձ, Ես կտանեմ ձեզ Իմ Հոր բազուկների մեջ, ով պաշտպանության կնիքը դնի ձեր և ձեր ընտանիքի շուրջը:

**(Տես պաշտպանության կնիքը՝ աղոթքի խաչակրաց արշավանք 33)*

Իմ սիրտը քնքույշ է, երբ ուրախությամբ ականատես եմ լինում այն սիրուն, որն ունեք միմյանց հանդեպ:

Դուք Ինձ այնպիսի սփոփանք եք պատճառում այն տառապանքից, որը Ես ստիպված եմ կրել մինչ պատերազմից բզկտված երկրներում Իմ զավակները հալածանքի են ենթարկվում:

Միավորվեք Ինձ հետ հիմա, որպեսզի նվիրյալ հետևորդների Իմ ընտանիքը միավորվի որպես մեկ, անկախ իրենց ծագումից և այն բանից, թե որ երկրից են, աշխարհում ատելությանը հաղթելու համար:

Սերն ավելի զորեղ է, քան ատելությունը:

Ատելությունը թուլանում է, երբ նրան պատասխանում են սիրով:

Եթե որևէ մեկը ձեզ հետ անարդար վարվի, դուք պետք է պատասխանեք սիրով, և սատանան կկծկվի ցավից:

Եթե գայթակղվում եք վրեժխնդիր լինել նրանցից, ովքեր վիրավորում են ձեզ, ապա պետք է աղոթեք նրանց համար, ներեք նրանց և դրա փոխարեն նրանց հանդեպ սեր ցույց տաք:

Սերը, որը տարածվում է երկրի վրա գտնվող Իմ ընտանիքի միջոցով, հզոր ուժ է:

Դուք երբեք չպետք է հավատաք, նույնիսկ մեկ պահ, որ ատելությունը կարող է պարտության մատնել սիրուն:

Ատելության ձեռքի տակ եղած ուժը, չնայած տգեղ և ցավալի է ականատես լինել դրան, կարող է պարտության մատնվել սիրո ուժով:

Ինչպե՞ս կարող է սերը թուլացնել ատելությունն աշխարհում այսօր: Պատասխանը՝ աղոթքն է:

Սիրեք Ինձ:

Լսեք Ինձ:

Պատասխանեք Իմ սիրելի Մոր և Իմ՝ Նրա Որդու խնդրանքներին ձեզ տրված բազմաթիվ աղոթքների միջոցով:

Ահա մի հատուկ խաչակրաց արշավանքի աղոթք Աստծո զավակների միավորման համար:

Այն սեր կտարածի երկրի յուրաքանչյուր անկյունում և կցրի այն ատելությունը, որն աճում է ամեն օր:

Այդ ատելությունը, որն առաջացնում է սատանան մարդկության թուլության միջոցով, և որն առաջացնում է այնպիսի բռնություններ, ինչպես խոշտանգումը, սպանությունը, աբորտը և ինքնասպանությունը, կարող է կասեցվել այս

Աղոթքի խաչակրաց արշավանքի (37) միջոցով – Աստծո բոլոր զավակների միավորման համար

Ով սիրելի Հիսուս

Միավորիր սիրո մեջ Քո բոլոր սիրելի հետևորդներին

Որպեսզի մենք կարողանանք տարածել հավիտենական փրկության մասին Քո խոստման ճշմարությունը աշխարհով մեկ:

Մենք աղոթում ենք, որ զաղջ հոգիները

Ովքեր վախենում են քեզ առաջարկել իրենց միտքը, մարմինն ու հոգին

Ցած կգցեն հպարտության իրենց զենքը և կբացեն իրենց սրտերը Քո սիրո առջև

Ու կդառնան երկրի վրա Քո ընտանիքի մի մասը:

Գրկիր այդ բոլոր կորած հոգիներին, սիրելի Հիսուս

և թույլ տուր որ մեր սերը , որպես նրանց եղբայրներ և քույրեր,

վեր բարձրացնի նրանց անապատից և մեզ հետ միասին տանի դեպի

Սուրբ Երրորդության գիրկը, սերը և լույսը:

Մենք դնում ենք մեր ողջ հույսը, վստահությունը և սերը Քո սուրբ ձեռքերի մեջ

Մենք խնդրում ենք Քեզ տարածել մեր պաշտամունքը, որպեսզի կարողանանք օգնել հոգիներ փրկելու:

Ամեն:

Ես սիրում եմ ձեզ, զավակներս:

Դուք երբեք չպետք է ընկճվեք, երբ ձեր շուրջը չարություն եք տեսնում:

Ձեր աղոթքները կարող են նվազեցնել այդ թուլությունը:

Ձեր սերը կհաղթի դրան:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Համասեռ ամուսնությունը ծանր մեղք է

Ուրբաթ, 16 մարտի, 2012թ, երեկոյան ժ 10:20

Իմ սիրելի աղջիկ, Իմ հետևորդների ցավն ու տառապանքը, ովքեր ստիպված են անօգնական ձևով դիտել, թե ինչպես են նոր օրենքները հակասում Իմ ուսուցումներին, անկանխատեսելի մակարդակների են հասնում աշխարհում:

Զավակներս, դուք ոչ միայն ստիպված եք ականատես լինել մեղքին, այլև ստիպված եք տեսնել, թե ինչպես է մեղքը ներկայացվում ձեզ, երբ ձեզ ստիպում են ընդունել այն որպես մարդասիրություն:

Ես հատկապես ի նկատի ունեմ մեկ մեղք՝ համասեռ ամուսնությունը, որը ներկայացվում է որպես բնական իրավունք:

Հետո ձեզանից ակնկալվում է ընդունել այդ պղծությունը մինչ այն կդրվի Իմ Հոր գահի առջև եկեղեցում: Այդ մարդկանց համար բավական չէ, որ թողություն են տալիս համասեռ ամուսնությանը օրենքով, դրանից հետո նրանք փորձում են ստիպել Հայր Աստծուն, որ իրենց տա Իր օրհնությունը: Նա (Աստված) երբեք չի անի դա, որովհետև դա մի ծանր մեղք է Նրա աչքում:

Ինչպես են այդ մարդիկ համարձակվում մտածել, թե ընդունելի է ցուցադրել այդ պղծությունը Իմ Հոր եկեղեցիներում:

Զավակներս, Ես սիրում եմ յուրաքանչյուր հոգու:

Ես սիրում եմ մեղավորներին:

Ես նողկում եմ նրանց մեղքից, բայց սիրում եմ մեղավորին:

Համասեռ սեռական ակտերը ընդունելի չեն Իմ Հոր աչքում:

Աղոթեք այդ հոգիների համար, որովհետև Ես սիրում եմ նրանց, բայց չեմ կարող տալ նրանց այն շնորհները, որոնք ցանկանում են:

Նրանք պետք է իմանան, որ անկախ նրանից, թե որքան են թողություն տալիս համասեռ ամուսնություններին, նրանց չի թույլատրվում մասնակցել ամուսնության սուրբ խարհրդին:

Խորհուրդը պետք է գա Աստծուց: Խորհուրդները ընդունելու կանոնները պետք է արմատավորված լինեն Իմ Հոր ուսուցումների մեջ:

Դուք չեք կարող ստիպել Իմ Հորը՝ Ամենաբարձրյալ Աստծուն, որ տա Իր օրհնությունը, կամ ստանալ Նրա սուրբ խորհուրդները, եթե դրանք չեն հարգվում հավուր պատշաճի:

Մեղքը հիմա ներկայացվում է աշխարհին որպես լավ բան:

Ինչպես նախկինում ասել եմ, աշխարհը շրջված է:

Լավը ներկայացվում է որպես վատ, իսկ նրանք, ովքեր փորձում են ապրել Հայր Աստծո օրենքներով, նրանց ծաղրում են:

Չարիքը, անկախ նրանից, թե ինչպես եք այն զգեստավորում, չի կարող դառնալ բարության գործողություն Իմ Հոր աչքում:

Իմ Հայրը կպատժի նրանց, ովքեր շարունակում են իրենց մեղքերը թափահարել Նրա առջև:

Ուշ դարձրեք այս նախազգուշացմանը ձեր մեղքերի համար, որոնք կատարվում են, երբ դուք մերժում եք ենթարկվել Աստծուն, դրանք չեն ներվի և չեն կարող ներվել:

Սա այն պատճառով է, որ դուք մերժում եք ընդունել մեղքը որպես այնպիսին, ինչպիսին կա:

Ձեր Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Ես կգամ ամպերի մեջ՝ շրջապատված Երկնքի բոլոր հրեշտակներով և սրբերով

Կիրակի 18 մարտի, 2012թ, ցերեկվա ժ 04:00

Իմ սիրելի աղջիկ, Իմ զավակները պետք է իմանան, որ աշխարհի հոգևորապես դատարկ լինելու պատճառն այն է, որ իրենք այլևս չգիտեն սխալի և ճշտի միջև եղած տարբերությունը:

Եթե Իմ լույսը չլիներ, որը լցնում է յուրաքանչյուր հոգու, ներառյալ մեղավորներին, աշխարհը կդադարեր գոյություն ունենալ:

Իմ լույսն է, որ շարունակում է կենդանի պահել աշխարհը:

Իմ հետևորդներից շատերը, ովքեր իրենց նվիրաբերել են տառապելու Ինձ հետ միասին, նույնպես օգնում են այդ լույսը վառ պահելու:

Իմ վերադարձից անմիջապես առաջ Իմ լույսը կանհետանա աշխարհում երեք օր:

Սա տեղի կունենա ամենավերջում և սա չպետք է շփոթել Նախազգուշացման հետ:

Այս երեք օրերի ընթացքում է որ կլինի լաց և ատամների կրճտոց, և մարդիկ խառնակռվի մեջ կլինեն՝ փնտրելով Իմ լույսը, չնայած մերժում են Ինձ:

Սա կլինի ճշմարտության ժամանակը:

Իմ հետևորդները չպետք է վախենան այդ երեք օրերից, քանի որ չնայած դուք չեք գիտակցի Իմ ներկայությունը, Ես ձեզ հետ կլինեմ:

Հետո, երեք օրից հետո Ես կվերադառնամ երկիր ճիշտ այն ձևով, ինչպես բարձրացա Երկինք:

Ես կգամ ամպերի մեջ՝ շրջապատված Երկնքի բոլոր հրեշտակներով և սրբերով մեծ փառքի մեջ:

Որքան գեղեցիկ և ուրախալի կլինի այդ օրը, երբ Ես կգամ թագավորելու երկրի վրա Իմ Հոր Կամքին համապատասխան:

Ոչ մի մարդ չի կասկածի, որ այդ Ես եմ:

Ոչ էլ նրանք կասկածներ կունենան իրենց ապագայի հանդեպ:

Սա կլինի այն օրը, երբ Ես գամ Դատելու:

Ես կբաժանեմ Իմ ժողովրդին՝ նրանք ովքեր սիրում են Ինձ և նրանք՝ ովքեր ատում են Ինձ:

Նրանք, ովքեր մերժել են Ինձ և պատվել ամեն ինչի, կքշվեն դժոխքի հավիտենական կրակների մեջ:

Մյուսները կգան և կապրեն Ինձ հետ Դրախտի մեջ հարություն առած արդարների հետ միասին:

Սա է այն վերջնական նպատակը, որին պետք է ձգտի յուրաքանչյուր հոգի, երբ Ես գամ նորից, ինչպես Ես խոստացել էի ձեզ:

Քրիստոնյաներին ես ասում են հետևյալը:

Իմացեք, որ այս մեծ և փառահեղ իրադարձությունը շուտով տեղի կունենա:

Ձեր սերունդը կտեսնի Իմ փառապանծ վերադարձը:

Ես երբեք չեմ բացահայտի օրը, քանի որ միայն Իմ Հայրը գիտի սա, բայց Ես կարող եմ վստահեցնել ձեզ, որ Իմ Երկրորդ Գալուստի ժամանակը մոտ է:

Իմ սրբազան սպասավորին, քեզ, Ես ասում եմ, որ քո պարտականությունն է նախապատրաստել Իմ ժողովրդին, այն հոգիներին, որոնց համար դու պատասխանատու ես, **որպեսզի նրանք ընդգրկվեն ապրողների գրքի մեջ:**

Ես աղերսում եմ քեզ, ջանասիրաբար աշխատել հաղորդակցության միջոցների և աղոթքի տված հնարավորությունների միջոցով՝ նախապատարստելու համար աշխարհը Իմ Երկրորդ Գալուստին:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Ողջ մարդկության Ազատարար

Կույս Մարիամ. Աղոթեք Բենեդիկտ Պապի համար, ով Հռոմից արտաքսվելու վտանգի մեջ է

Երեքշաբթի, 20 մարտի, 2012թ, երեկոյան ժ 08:30

Զավակս, հանդարտություն է, ինչպես փոթորկից առաջ, մինչ **կաթոլիկ եկեղեցին շուտով կընկղմվի ճգնաժամի մեջ:**

Ես կոչ եմ անում ամենուր գտնվող Իմ զավակներին, որ աղոթեն **Բենեդիկտ XVI Պապի համար, ով Հռոմից արտաքսվելու վտանգի մեջ է:**

Նրան, կաթոլիկ եկեղեցու ամենասուրբ Երեցին, ատում են շատերը Վատիկանում:

Մի չար սյուժե, նախագծված արդեն մի տարի, շուտով կերևա աշխարհով մեկ:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք կաթոլիկ եկեղեցում Աստծո բոլոր սրբազան սպասավորների համար, որոնց կհետապնդեն եկեղեցու ներսում այն մեծ բաժանման պատճառով, որը շուտով տեղի կունենա:

Այդ մեծ հերձվածությանն ականատես կլինեն ողջ աշխարհում, բայց այն անմիջապես չի երևա որպես այդ դեպքը:

Կեղծ Պապը սպասում է, որ ինքն իրեն բացահայտի աշխարհին:

Զավակներս, չխաբվեք, որովհետև նա Աստծուց չի լինի:

Հռոմի բանալիները վերադարձվել են Իմ Հորը՝ Ամենաբարձրյալ Աստծուն, ով կղեկավարի Երկնքից:

Մեծ պատասխանատվություն կդրվի այն բոլոր սրբազան քահանաների, եպիսկոպոսների և կարդինալների վրա, ովքեր սիրում են Իմ Որդուն:

Նրանք կարիք կունենան շատ արիության և աստվածային տոկունության, որպեսզի առաջնորդեն հոգիներին դեպի Նոր Դրախտը:

Այդ սրբազան աշակերտների կողմից Իմ սիրելի Որդու Երկրորդ Գալուստի համար կատարվող ցանկացած ջանք կատաղի կերպով կդիմադրվի մյուս՝ խավարի կողմից:

Ես կոչ եմ անում Իմ բոլոր զավակներին, որ աղոթեն անհրաժեշտ զորության համար, մինչ հակաքրիստոսը և նրա գործընկերը՝ կեղծ մարգարեն, կբարձրանան:

Դուք պետք է խնդրեք Ինձ՝ Փրկության Մորը, աղոթքների համար, վստահանալու, որ կաթոլիկ եկեղեցին կփրկվի, և որ Իմ Որդու ճշմարիտ խոսքը կփրկվի:

Իմ Որդու խոստման ճշմարտությունը՝ մեծ փառքով վերադառնալու մասին, ոտնակոխ կարվի:

Ձեզ, զավակներս, կտրվի ստերի մի շարք, որոնք կակնկալվի, որ դուք պատվեք և ընդունեք Իմ Որդու սուրբ Անվամբ:

Իմ խաչակրաց աղոթքի արշավանք (38)-ը պետք է ասվի եկող ամսվա համար ամեն օր ,վստահանալու համար, որ Աստծո սրբազան սպասավորները չընկնեն այն չար խաբեության մեջ, որը պլանավորվում է Կեղծ մարգարեի և նրա հետևորդների կողմից:

Ով Օրհնյալ Մայր Փրկության

Խնդրում եմ, աղոթիր կաթոլիկ եկեղեցու համար

Այս դժվարին ժամանակներում, և մեր սիրելի Բենեդիկտ XVI Պապի համար՝

Թեթևացնելու նրա տառապանքը:

Մենք խնդրում ենք Քեզ, Մայր Փրկության,

Որ ծածկես Աստծո Սրբազան սպասավորներին

Քո սուրբ թիկնոցով

Որպեսզի նրանց տրվի ուժեղ, հավատարիմ և քաջ լինելու շնորհները

Այն փորձությունների ընթացքում, որոնց կդիմակայեն:

Աղոթիր նաև, որ նրանք հոգ տանեն իրենց հոտին

Կաթոլիկ Եկեղեցու ճշմարիտ ուսուցումներին համապատասխան:

Ով Աստծո Սուրբ Մայր, տուր մեզ՝ երկրի վրա քո մնացորդ եկեղեցուն

Առաջնորդության ընծան, որպեսզի մենք կարողանանք առաջնորդել հոգիներ փրկելու

Դեպի Քո Որդու Թագավորություն:

Մենք խնդրում ենք Քեզ, Մայր Փրկության, որ հեռու պահես խաբեբային Քո Որդու հետևորդներից, որ նրանց որոնումների մեջ պահես նրանց հոգիները, որպեսզի նրանք հարմար լինեն ներս մտնելու երկրի վրա Նոր Դրախտի դարպասներից:

Ամեն:

Գնացեք, զավակներս, և աղոթեք եկեղեցու նորացման և այն սրբազան սպասավորների ապահովության համար, ովքեր կտառապեն իրենց հավատի համար Կեղծ մարգարեի ղեկավարման ժամանակ:

Մարիամ, Մայր Փրկության

Եկեղեցում հերձվածության ժամանակը համարյա հասել է, և դուք պետք է նախապատրաստվեք հիմա

Երեքշաբթի, 20 մարտի, 2012թ, երեկոյան ժ 09:20

Իմ սիրելի աղջիկ, Ես ցանկանում եմ գրկել Իմ բոլոր աշակերտներին և հետևորդներին ամենուր Իմ բազուկների մեջ այս պահին:

Ես ձեր սփոփանքի կարիքն ունեմ, զավակներս:

Ես ձեր մխիթարանքի կարիքն ունեմ Իմ տառապանքների համար, մինչ արցունք եմ թափում երկրի վրա գտնվող Իմ եկեղեցու համար:

Իմ սրբազան սպասավորներից ոմանք այնքան են հեռացել, որ **նրանցից շատերը չեն հավատում Իմ Երկրորդ Գալուստին:**

Այն եպիսկոպոսները, քահանաներն ու կարդինալները, ովքեր հավատում են, նրանց մի կողմ են հրում և ստիպում լռել:

Ինչպես եմ Ես լալիս Իմ այն խեղճ թանկագին աշակերտների համար, ովքեր իրենց կյանքը նվիրել են Ինձ և մարդկության մեջ Իմ ուսուցումները տարածելուն:

Շուտով նրանք ստիպված կլինեն ուշադիր լինել, թե ինչ են ասում Իմ Սուրբ Խոսքի մասին, քանի որ նրանց կստիպեն հռչակել մի ստախոսի ուսուցումները, ում հոգին լույսից չի գալիս:

Միավորվեք հիմա, զավակներս, Իմ սիրելի քահանաներ և բոլորդ ովքեր սիրում եք Ինձ, և օգնեք Ինձ հոգիներ փրկել:

Դա անելու համար դուք չպետք է կորցնեք ոչ մի պահ: Դուք պետք է ասեք մյուսներին այն մեծ փառքի մասին, որն սպասվում է առջևում ձեզնից յուրաքանչյուրիդ և ամեն մեկիդ համար Երկրորդ Գալուստի ժամանակ:

Այս մեծ և փառահեղ իրադարձությունը կլինի այն պահը, երբ դուք վերջապես կմիավորվեք Ինձ հետ՝ ձեր թանկագին Հիսուսի հետ, ով այնքան շատ է սիրում ձեզ բոլորիդ:

Դուք, Իմ սիրելի հետևորդներ, պետք է միշտ զգոն լինեք:

Ձեզ կգայթակղեցնեն, որ լքեք Ինձ, հրաժարվեք Իմ ճշմարիտ ուսուցումներից, և ձեզ կստիպեն պատվել և ենթարկվեն զառան մորթի հագած գայլին:

Այնքան շատ խեղճ հոգիներ ոչ միայն կընկնեն կեղծ Պապի կախարդանքի տակ՝ այնքան վաղուց կանխասացված կեղծ մարգարեի, այլև նա կստիպի ձեզ հավատալ, թե աստվածային զորություններ ունի:

Ձավակներս, եկեղեցու մեջ հերձվածության ժամանակը համարյա հասել է, և դուք պետք է հիմա նախապատրաստվեք:

Միավորվեք որպես մեկ:

Բռնեք մեկդ մյուսից:

Պաշտպանեք միմյանց և աղոթեք բոլոր նրանց համար, ովքեր կհետևեն սխալ ուղուն և կպատվեն Կեղծ մարգարեին:

Շատ աղոթքի կարիք կա, բայց եթե անեք այնպես, ինչպես Ես եմ ասում, կարող եք հոգիներ փրկել:

Դուք, Իմ թանկագին հետևորդներ, կկազմեք երկրի վրա Իմ մնացորդ եկեղեցին, և ձեզ կառաջնորդեն այն քաջ սրբազան սպասավորները, ովքեր կճանաչեն Կեղծ մարգարեին որպես այնպիսին, ինչպիսին նա իրականում կա:

Մի վախեցեք, քանի որ Ես ձեզանից յուրաքանչյուրի վրա հեղում եմ իմաստության, հանդարտության և զանազանության շնորհները, ովքեր Ինձ խնդրում են այդ անել այս աղոթքի միջոցով.

Ով Հիսուս, օգնիր ինձ միշտ տեսնել Քո Սուրբ Խոսքի ճշմարությունը

և հավատարիմ մնալ Քո ուսուցումներին, անկախ նրանից, թե ինձ որքան կստիպեն մերժել Քեզ:

Ոտքի կանգնեք հիմա և քաջ եղեք բոլորդ, քանի որ Ես երբեք չեմ լքի ձեզ:

Ես կքայլեմ ձեզ հետ փշոտ ճանապարհով և ապահով ձևով ձեզ կառաջնորդեմ դեպի Նոր Դրախտի դարպասները:

Դուք պետք է միայն Ինձ ամբողջապես վստահեք:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Ասա մարդկությանը, որ հիմա ամեն ինչ Իմ Ամենասուրբ ձեռքերի մեջ է

Չորեքշաբթի, 21 մարտի, 2012թ, երեկոյան ժ 08:30

Ես գալիս եմ քեզ մոտ այս երեկո, Իմ սիրելի աղջիկ, ասելու համար մարդկությանը, որ հիմա ամեն ինչ Իմ Ամենասուրբ Ձեռքերի մեջ է:

Ես ի նկատի ունեմ գլոբալ խմբի գաղտնի պլանները, ովքեր ցանկանում են վերահսկել ձեր արժույթները, ձեր առողջապահության համակարգը և ձեր ինքնիշխանությունը:

Նրանց թույլ չի տրվի ձեզ վերահսկել, և Իմ Հոր Ձեռքը արագորեն կիջնի, եթե նրանք փորձեն վնասել ձեզ, զավակներս:

Բոլոր հավատացողներին, ովքեր ունեն Իմ Հավիտենական Հոր Պաշտպանության Կնիքը՝ Կենդանի Աստծո Կնիքը, նրանց ոչ մի վնաս չի հասնի:

Ահա թե ինչու դու, աղջիկս, պետք է ապահովես, որպեսզի որքան հնարավոր է արագ կերպով Աստծո զավակներից շատերին տրվի այս հնարավորությունը աշխարհի յուրաքանչյուր անկյունում:

Ձեր աղոթքները, զավակներս, շատ հզոր են, հատկապես նրանցը, ովքեր ասում են Իմ խաչակրաց արշավանքի աղոթքները, Իմ Աստվածային Գթասրտության աղոթքը և Սուրբ Վարդարանն ամեն օր:

Այդ աղոթքներն արդեն հետաձգել և կանխել են մի միջուկային պատերազմ, միլիոնավոր հոգիների են փրկել դժոխքի կրակներից և կանխել են բազմաթիվ երկրաշարժեր:

Երբեք մի մոռացեք, որ ձեր աղոթքներն են չարի դեմ ձեր ամենամեծ զենքերը:

Իմ հանդեպ ձեր նվիրվածության պատճառով, Իմ՝ Հիսուս Քրիստոսի նկատմամբ սերը տարածվել է:

Դուք, զավակներս, Իմ ժամանակակից աշակերտներն եք, և հիմա ձեզ տրվել է Սուրբ Հոգու իշխանությունն ու ընծան՝ տարածելու համար Իմ Ամենասուրբ Խոսքը:

Հիմա ձեզ որպես ընծա տրվում է խաչակրաց արշավանք (39)-ի աղոթքը, որպեսզի կարողանաք քայլել Աստծո բոլոր զավակների մեջ և օգնել նրանց նախապատրաստելու իրենց հոգիները Նոր Դրախտի և Իմ Երկրորդ Գալուստի համար:

Ով Հիսուս, իմ սիրելի Փրկիչ

Ես խնդրում եմ, որ ծածկես ինձ Քո Սուրբ Հոգով

Որպեսզի կարողանամ իշխանությամբ խոսել Քո Ամենասուրբ Խոսքը

Նախապատրաստելու համար Աստծո բոլոր զավակներին Քո Երկրորդ Գալուստին

Ես խնդրում եմ Քեզնից, Տեր Հիսուս, այն բոլոր շնորհները որոնց կարիքն ունեմ

Հասնելու համար բոլոր հավատներին, հավատամքներին և ազգություններին, ուր էլ որ գնամ:

Օգնիր ինձ խոսել Քո լեզվով

Սփոփել խեղճ հոգիներին Քո շուրթերով

և բոլոր հոգիներին սիրել այն յուրահատուկ աստվածային սիրով

որը դուրս է հեղվում Քո Սուրբ Սրտից:

Օգնիր ինձ փրկել հոգիների՝ այնքան մոտիկ քո սրտին

և թույլ տուր ինձ սփոփել Քեզ, սիրելի Հիսուս երբ կորած հոգիները

շարունակեն մերժել Քո գթասրտությունը:

Հիսուս, ես ոչինչ եմ առանց Քեզ, բայց քո առատաձեռն օգնությամբ

և կկռվեմ քո անվամբ՝ օգնելու համար փրկել ողջ մարդկությանը:

Ամեն:

Իմ բանակը, որը դուրս է եկել Իմ այս սուրբ պատգամներից, արդեն հասել է յոթ հարյուր հազար հոգու:

Օգնեք Ինձ դարձի բերելու ավելի շատ Աստծո զավակների, որպեսզի ոչ մի հոգի չկորչի սատանային Դատաստանի ժամանակ:

Ես ձեզ ուժեղ կպահեմ Ինձ համար արվող ձեր բոլոր աշխատանքի մեջ, զավակներս:

Ես սիրում եմ ձեզ, Իմ թանկագին մնացորդ եկեղեցի:

Ձեր սիրող Հիսուս

Իմ Երկրորդ Գալուստի նկատմամբ ընդդիմությունը կատաղի կլինի

Հինգշաբթի, 22 մարտի, 2012թ, երեկոյան ժ 11:00

Իմ սիրելի աղջիկ, Իմ ցավը հիմա դարձել է քոնը Ինձ հետ ամբողջական միության մեջ: Չնայած սա շատ դժվար կլինի քեզ համար, այն քեզ շատ ուրախություն և բազմաթիվ նոր շնորհներ կբերի:

Ես հիմա քեզ վրա հեղում եմ հոգիները կարդալ կարողանալու ընծան: Ես շնորհում եմ այս յուրահատուկ ընծան երկու պատճառով: Առաջինը, որպեսզի քեզ տամ այն պաշտպանությունը, որն անհրաժեշտ է, երբ կսկես շփվել Իմ հետևորդներից ոմանց հետ:

Երկրորդը, այն սրտով կարծրացածներին դարձի բերելու համար է, ովքեր մարտահրավեր կնետեն Իմ Ամենասուրբ Խոսքին:

Դու պետք է ընդունես այս նոր տառապանքը, որը զգում ես, և իմանաս, որ այն ուժգնանում է աշխարհում ավելացած չարության պատճառով:

Դու, աղջիկս, և Իմ մյուս ընտրյալ հոգիներից շատերը, հիմա զգում եք և՛ ֆիզիկական, և՛ ներքին տառապանք միաժամանակ:

Սա այն տառապանքի պատճառով է, որը այս օրերին զգում է նաև Իմ սուրբ Երեցը, երբ նա կդիմակայի ամենամեծ փորձությանը:

Ընդունիր Իմ Գավաթը, աղջիկս, իսկ նրանց, ովքեր ընդունում են Իմ Սուրբ Խոսքը այս պատգամների միջոցով, իմացեք, որ ձեր հոգու առատաձեռնությունը ամեն օր միլիոնավոր հոգիներ է փրկում: Ձեր տառապանքի ոչ մի պահը չի կորչում անտեղի:

Ես հասկանում եմ, զավակներս, որ երբ դուք վերցնում եք Իմ խաչը և հետևում Ինձ, որ դուք դրա հետևանքով կտառապեք:

Բայց իմացեք, որ այդ անելով դուք օգնում եք Ինձ փրկելու մարդկության մեծ մասին: Դուք Ինձ կօգնեք նաև երկրի վրա Իմ թագավորելու ժամանակ, երբ խաբեբան կվտարվի և երկրի վրա Իմ Նոր Դրախտը կմխրճվի:

Իմացեք նաև, որ դուք, որ տառապում եք Ինձ հետ, հետևելով Դրախտ տանող Իմ ուղուն, կգնաք դեպի Գողգոթա տանող այն ճանապարհով, որով Ես գնացի երբ եկա առաջին անգամ:

Այսօր քրիստոնյաները կարող են հավատալ, որ եթե Ես երկրորդ անգամ գալու լինեմ, այդպիսի դաժանությամբ չեն վարվի Ինձ հետ: Նրանք սխալվում են:

Իմ Երկրորդ Գալուստի նկատամամբ ընդդիմությունը կատաղի կլինի:

Իմ Սուրբ Խոսքը արդեն իսկ ծաղրվում և հարցականի տակ է դրվում, և կծաղրվի ու հարցականի տակ կդրվի:

Իմ զավակները, հատկապես հաստատուն և ուժեղ հավատ ունեցողները, չեն կարողանում հասկանալ, որ մեծամասնությունը կմերժի Իմ մարգարեներին արտաքին տեսքից, ճիշտ ինչպես անցյալում էին մերժում:

Այս ժամանակ քեզ տրվող Իմ Խոսքը, **արդեն իսկ անտեսվում է եկեղեցու շատ մասերում և հեռացվում ճիշտ այնպես, ինչպես անում էին փարիսեցիները երկրի վրա Իմ եղած ժամանակ:**

Իմ ուսուցումների ճշմարտությունը, որոնք երբեք չեն փոխվել, կդատապարտվեն որպես ստեր:

Ինչու՞ է այդպես: Ես ասում եմ ձեզ, որովհետև այնքան շատերն են շրջել Իմ ուսուցումների ճշմարատությունը այնպիսի չափով, որ **այլևս չեն հավատում մահացու մեղքին:**

Այնքան շատերն են ընտրում անտեսել Սուրբ Աստվածաշնչում պարունակվող ճշմարտությունը:

Ինչու՞ են նրանք մերժում, օրինակ, Նոր Երկնքի և Երկրի 1000 տարվա գոյությունը:

Այս հայտնությունը չափազանց յուրօրինակ է, և ճշմարտությունն այնտեղ է, որ բոլորը տեսնեն:

Չնայած դրան, Իմ Սուրբ Խոսքին մարտահրավեր են նետում:

Հայտնության Գիրքը, ճիշտ ինչպես Դանիելի գրքում պարունակվող մարգարեությունները, տրվել են ձեզ միայն մասերով: Ձեզնից շատերն են շփոթված:

Բայց սա այն պատճառով է, որ այդ երկու մարգարեներին հայտնված բովանդակությունը փակվել և թաքցվել է մինչև վերջին ժամանակները:

Միայն Ես՝ Հիսուս Քրիստոսը, Աստծո Գառը, իշխանություն ունեմ մարդկությանը բացահայտելու բովանդակությունը:

Ինչպե՞ս կարող եք հայտարարել, թե ամեն ինչ գիտեք Իմ Երկրորդ Գալուստի մասին, երբ միայն մասերը գիտեք: Երբ դրանք դեռևս չեն բացահայտվել:

Դուք պետք է լսեք Իմ Սուրբ Խոսքը, քանի որ այն տրվում է ձեզ հոգիներ փրկելու համար:

Եթե շարունակեք մերժել Իմ Խոսքը Նախազգուշացման տեղի ունենալուց հետո, մինչ աշխարհին տրված այս պատգամները կշարունակվեն ծավալվել, դուք մեղավոր կլինեք Իմ Գթասրտության Ձեռքը մերժելու մեջ:

Անկախ նրանից, թե որքան եք Ինձ հավատում, կամ հայտարարում, թե ճանաչում եք Ինձ, դուք կգործեք Ինձ մերժելու մեղքը: Որպես այդպիսին դուք կորած կլինեք Ինձ համար, և հարմար չեք լինի Դրախտի դարպասներից ներս մտնելու:

Իմ պարտականությունն է, տրված ձեզ՝ ելնելով Իմ մաքուր սիրուց ու կարեկցանքից, որ Ես հիմա փորձում եմ ձեզ նախապատրաստել վերջին ժամանակների համար:

Խնդրում եմ մի մերժեք Ինձ այս երկրորդ անգամ, մինչ գալիս եմ փրկելու մարդկությանը հավիտենական դատապարտությունից և առաջարկում եմ ձեզ հավիտենական փրկության բանալիները:

Քանի որ Ես սիրում եմ ձեզ, դրա համար Ես պետք է հաստատուն լինեմ և առաջնորդեմ ձեզ դեպի ճշմարտությունը:

Մի սպասեք մինչև Իմ Դատաստանի օրը, որ հայտնաբերեք ճշմարտությունը:

Եկեք Ինձ հետ հիմա և օգնեք Ինձ փրկելու մարդկության հոգիները:

Ձեր Ուսուցիչ և Ազատարար

Հիսուս Քրիստոս

Ձեզ շատ ժամանակ չի մնացել, նախքան Ես կգամ Դատելու համար

Կիրակի, 24 մարտի, 2012թ, առավոտյան ժ 11:45

Այսօր Ես գալիս եմ քեզ մոտ, Իմ սիրելի աղջիկ, տեղեկացնելու աշխարհին Իմ Մեծ Գթասրտության մասին:

Ես ցանկանում եմ նաև տեղեկացնել աշխարհին Իմ Արդարադատության մասին:

Ձավակներս, շատ ժամանակ չունեք նախքան Ես կգամ դատելու:

Այս ժամանակահատվածն է, այժմվանից մինչև Իմ Դատաստանի օրը, որը տեղի կունենա Իմ Երկրորդ Գալուստին, որ դուք պետք է օգտագործեք խելամտորեն՝ նախապատրաստելու համար ձեր հոգիները:

Որպես ձեր Աստվածային Փրկիչ, Իմ պարտականությունն է ձեզ ուղղություն տալ, սովորեցնել և բացահայտել ուղիները, ուր կարողանաք վստահանալ, որ հարմար եք Իմ Դրախտը մտնելու համար:

Մի մերժեք Իմ մարգարեներին, Ես դիմում եմ հատկապես Իմ սրբազան սպասավորներին:

Դուք պետք է խոնարհությամբ և հոգու մաքրությամբ խնդրեք Ինձ, որ ծածկեմ ձեզ Իմ Սուրբ Հոգով՝ զանազանելու համար:

Երբ այդ անեք, Ես կբացահայտեմ ձեզ հիմա այս մարգարեի միջոցով ձեզ տրվող Իմ Ամենասուրբ Խոսքի ճշմարտությունը:

Դրանից հետո **ձեր պարտականությունը կլինի վստահանալ, որ առաջնորդություն ստանալու համար ձեզ նայող բոլոր հոգիներին կօգնեք նախապատրաստելու իրենց հոգիները Իմ Երկրորդ Գալուստի համար:**

Երբեք մի վախեցեք արտասանել Քրիստեսի Երկրորդ Գալուստ արտահայտությունը, քանի որ Իմ հոտից շատերը չգիտեն, թե դա ինչ է նշանակում:

Նրանցից այնքան քչերին է ասվել այս մեծ և փառահեղ իրադարձության մասին, կամ էլ իրենց հոգիները նախապատրաստելու կարևորության մասին, որպեսզի լինեն շնորհի վիճակում:

Երբեք մի վախեցեք քարոզել քավարանի կամ դժոխքի գոյությունը: Ձեր պարտականությունն է, որ Իմ ժողովրդին ասեք ճշմարտությունը:

Ինձ նայեք առաջնորդության համար **խաչակրաց այս արշավանքի միջոցով (40)** – աղոթք հոգևորականության համար՝ Երկրորդ Գալուստի համար հոգիներ նախապատրաստելու.

Ով իմ Հիսուս

Ես մի խոնարհ ծառա եմ և կարիք ունեմ, որ Դու առաաջնորդես ինձ

Որպեսզի ես կարողանամ նախապատրաստել հոգիներին Քո Երկրորդ Գալուստին

Օգնիր ինձ դարձի բերելու հոգիների և նախապատարստելու նրանց

Ըստ Քո Սուրբ Կամքի որպեսզի նրանք հարմար լինեն

Մտնելու Նոր Երկինք և Երկիր, որ Դու խոստացար ողջ

Մարդկությանը՝ խաչի վրա Քո մահվան միջոցով:

Տուր ինձ շնորհները, որոնց կարիքն ունեմ, որպեսզի կարողանամ հասցնել

Քո խոսքը ծարավ հոգիներին, և երբեք չտատանվեմ

Քո հանդեպ իմ պարտականության մեջ, սիրելի Հիսուս, ում ես Իմ հավատարմությունն եմ հայտնում իմ սրբազան երդումների միջոցով:

Ամեն:

Գնա հիմա Իմ սրբազան սպասավոր և ընդունիր այն դերը, որի համար ընտրվել ես:

Իմ Երկրորդ Գալուստի համար հոգիներ նախապատրաստելու կոչը հիմա ամենամեծն է ձեր սպասավորության մեջ, և դուք պետք է ընդունեք սա սիրով և ուրախությամբ ձեր սրտերի մեջ:

Ընդունիր նաև որպես սրբազան սպասավոր ընտրված լինելու ընծան այս վերջին ժամանակների համար, երբ Նոր Երկինքն ու Երկիրը միանան որպես Իմ Նոր Դրախտ:

Դուք օրհնյալ եք, որ ապրում եք այս ժամանակներում:

Բայց ձեզ կչարչարեն ու կխանգարեն ձեր ճամփորդության յուրաքանչյուր մասում, երբ օգնեք երկրի վրա հոգիներ փրկել խաբեբայից և բոլոր նրանց, ում նա գայթակղում է, որ ձեր սրտերը մի կողմ դարձնեք Ինձնից՝ ձեր Աստվածային Փրկչից:

Երբեք տեղի չտաք ձեր սուրբ առաքելության մեջ և իմացեք, որ Ես՝ Հիսուսը քայլում եմ ձեզ հետ ճանապարհի յուրաքանչյուր քայլը:

Ձեր սիրող Հիսուս

Նույնիսկ Նախազգուշացումը չի դարձի բերի բոլոր չհավատացողներին

Կիրակի, 25 մարտի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, այսօր Ես կոչ եմ անում Իմ բոլոր հետևորդներին՝ իրենց ժամանակը նվիրել աղոթելու նրանց համար ովքեր Ինձ՝ Հիսուս Քրիստոսին չեն հավատում, ոչ էլ հավիտենական փրկությանը:

Այդ հոգիկները մոտիկ են Իմ սրտին և նրանք են, ովքեր դարձի գալու կարիք ունեն, որպեսզի կարողանան առաջինը փրկվել:

Նրանք, ովքեր կույր են, չեն կարող տեսնել, որ իրենց կյանքը չի ավարտվում երկրի վրա:
Շատերը չեն ընդունում, որ իրենք գոյություն են ունենալու հավիտյան:

Այդ հոգիները խորապես վիրավորում են Ինձ, և Ես սարսափ եմ զգում, մինչ դիտում եմ, թե ինչպես ոչնչացնում կյանքը իրենց հոգիների մեջ երկրի վրա այս կյանքի ընթացքում:

Նույնիսկ Նախազգուշացումը չի դարձի բերի նրանցից շատերին, ովքեր իրենց աթեիստ են համարում:

Նրանց միակ փրկությունը զոհաբերվող հոգիների աղոթքների և տառապանքի միջոցով է:

Ես ձեզ աղոթքի կոչ եմ անում այդ հոգիների **համար** **այս (41) աղոթքի խաչակրաց արշավանքի** միջոցով չհավատացողների համար:

Ով իմ Հիսուս, օգնիր Քո զավակներին

Մենք կույր ենք փրկության Քո խոստումի հանդեպ

Ես խնդրում եմ Քեզ, որ իմ աղոթքների և տառապանքի օգնությամբ

Բացես չհավատացողների աչքերը, որպեսզի նրանք կարողանան տեսնել Քո

Քնքուշ սերը և վազեն Քո սուրբ բազուկների մեջ պաշտպանության համար,

Օգնիր նրանց տեսնել ճշմարտությունը և թողություն փնտրել իրենց բոլոր մեղքերի համար

Որպեսզի կարողանան փրկվել և առաջինը լինել մտնելու Նոր Դրախտի դարպասներից,

Ես աղոթում եմ այդ խեղճ հոգիների համար, ներառյալ տղամարդկանց, կանանց և երեխաների, և կոչ եմ անում Քեզ որ թողություն տաս նրանց մեղքերին:

Ամեն:

Գնացեք հիմա, Իմ թանկագին բանակ և ուշադրությունը կենտրոնացրեք Իմ խեղճ կորած զավակների վրա: Օգնեք Ինձ՝ ձեր Հիսուսին, փրկել նրանց հոգիները:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Կույս Մարիամ. Խնդրիր Իմ զավակներին մեկ օրով ծոմ պահել Ավագ Ուրբաթ օրը՝ համաշխարհային մեկ արժույթը կասեցնելու համար

Երեքշաբթի, 27 մարտի, 2012թ, երեկոյան ժ 06:00

Զավակս, Ավագ շաբաթվա ընթացքում քո տառապանքները, ինչպես նաև մյուս ընտրյալ հոգիների տառապանքները, կուժգնանան:

Այդ շաբաթվա ընթացքում խաբեբան պատերազմների, հալածանքի և բռնության միջոցով կվնասի որքան կարող է շատ Աստծո զավակների:

Այդ ժամանակ է, որ նա մեծ տառպանք է պատճառում, ճիշտ ինչպես Իմ Թանկագին Որդին կրեց խաչի վրա Իր տառապանքի ընթացքում:

Զավակս, դու պետք է ասես բոլոր նրանց, ովքեր ամենուր խրախուսել են հոգիների՝ աղոթելու Իմ Սուրբ Վարդարանը յուրաքանչյուր ուրբաթ օր մինչև Զատիկ, որ Ես շատ գոհ եմ:

Այդ պաշտամունքի միջոցով օգնություն են ստանում այն բոլոր հոգիները, որոնց նրանք փրկում են իրենց սեփական ազգերի տառապանքի հետ միասին:

Իմ Որդու սերը հիմա ավելի շատ մարդիկ են զգում ողջ աշխարհով մեկ, մեծ տառապանքի ժամանակ:

Նա թեթևացնում է նրանց ցավը Իր հատուկ շնորհներով և հանգստացնում է նրանց հոգիները Սուրբ Հոգու Զորությամբ:

Զավակներս, ձեր աղոթքները, որոնք սիրով ներկայացնում եք Երկինք, լսվում են:

Դուք պետք է փնտրեք Իմ Որդու և Իմ Հավիտենական Հոր օգնությունը միշտ: Յուրաքանչյուր եզակի աղոթք, անկախ նրանից թե որքան փոքր է, լսվում և դրանց պատասխան է տրվում Ամենաբարձրյալ Աստծո կամքին համապատասխան:

Զավակս, խնդրիր Իմ զավակներին, որ մեկ օրով ծոմ պահեն Ավագ Ուրբաթ օրը, որպեսզի կասեցնեն համաշխարհային մեկ արժույթի ներմուծումը:

Ձեր աղոթքներն ու ծոմապահությունը կարող են անել այդ:

Հենց որ ձեր ծոմապահության ժամանակ ասվի այս աղոթքը, Իմ Հավիտենական Հայրը կկասեցնի այդ մարդկանց այդ դաժանությունը պատճառելուց, որը նրանք պլանավորում են որպեսզի կարողանան վերահսկել ձեզ:

Այս նույն մարդիկ ցանկանում են ոչնչացնել քրիստոնեությունը, ուստի կարևոր է, որ դուք կասեցնեք դա տեղի ունենալուց՝ հատուկ զոհողությունների միջոցով:

Աղոթքի խաչակրաց արշավանք (42) Ծոմապահության աղոթք՝ կասեցնելու համար համաշխարհային մեկ արժույթը

Ով Ամենաբարձյալ Աստված

Ես առաջարկում եմ Քեզ իմ ծոմապահության ընծան

Որպեսզի Դու կասեցնես չարի ճանկը աշխարհում

Որ պլանավորում է սովամահ անել իմ երկիրը սննդից՝ ներառյալ կյանքի հացից,

Ընդունիր իմ առաջարկը և լսիր իմ աղերսները ուրիշ ազգերի համար, կանխելու համար

Նրանց տառապանքը, որը պլանավորվել է հակաքրիստոսի կողմից:

Փրկիր մեզ, սիրելի Տեր, չարությունից և պաշտպանիր մեր հավատը,

Որպեսզի մենք կարողանանք պատվել Քեզ այն ազատության միջոցով, որի կարիքն ունենք Քեզ սիրելու և երկրպագելու համար

Հավիտյանս հավիտենից: Ամեն:

Զավակս, Ավագ Ուրբաթ օրվա մեկօրյա ծոմապահությունը շատ ազատություն կբերի ազգերին չարից և նրանցից, ովքեր հետևում են նրա չար ցանկություններին՝ վերահսկելու բոլոր ազգերի ֆինանսները:

Ձեր սիրող Մայր

Մայր Փրկության

Մայր Աստծո

Հիսուսը բացահայտում է Իր Խաչելության մանրամասներ

Հինգշաբթի, 29 մարտի, 2012թ, ցերեկվա ժ 01:15

Իմ սիրելի աղջիկ, Իմ ավելի շատ տառապելու ժամանակը մոտենում է, երբ կնշվի խաչի վրա Իմ տառապանքի հիշատակը:

Ոչ մի մարդ չի հասկանում Իմ տառապանքի աստիճանը խաչելության ընթացքում, ոչ էլ այն, թե ինչպես Ես խարազանվեցի:

Իմ խարազանումն ամենավատն էր: Ինձ դաժանորեն ծեծում էին տասը հոգի, և Իմ մարմնի յուրաքանչյուր մատնաչափը կտրատվել էր մտրակվելուց:

Իմ մեջքի միսը պոկվել էր, և Իմ ուսերի բերանները տեսանելի էին:

Ես հազիվ էի կարողանում կանգնել, իսկ մի աչքս կապտած էր և ջարդված:

Ես կարողանում էի տեսնել միայն ձախ աչքով:

Երբ Ինձ տարան Պոնտացի Պիղատոսի մետ և Իմ Գլխին դրեցին փշե պսակը, Ես հազիվ էի կարողանում կանգնել:

Հետո նրանք Ինձ մերկացրեցին, նախքան գլխիս կգցեին մի կարճ կարմիր ծածկոց, իսկ աջ ձեռքումս կդներին արմավենու ճյուղ:

Ամեն մի փուշը ասեղի պես էր. Այնքան որ նրանք սուր էին: **Այդ փշերից մեկը ծակեց նաև Իմ աջ աչքը, որի հետևանքով հազիվ էի կարողանում տեսնել:**

Ես այնքան շատ արյուն էի կորցրել, որ ործկացի, իսկ գլուխս այնքան էր պտտվում, որ երբ սկսեցի բարձրանալ Գողգոթա, չէի կարողանում պահել խաչը:

Ինձ շատ անգամ թվաց, թե ժամեր անցան մինչև հասա բլրի գագաթին:

Ինձ խարազանում և մտրակում էին ճանապարհի յուրաքանչյուր քայլի:

Իմ մարմինն ամբողջովին ծածկված էր արյունով և խիտ քրտինքով, այրող արևի պատճառով:

Ես մի քանի անգամ ուշագնաց եղա:

Չնայած այս ամենը ցավալի էր և տառապալի, բայց ամենատառապալին Իմ հանդեպ ցուցաբերվող ատելությունն էր ոչ միայն չահասների կողմից ողջ ճանապարհի ընթացքում, այլև՝ **երեխաների, ովքեր ոտքով հարվածում էին Ինձ, որովհետև հետևում էին իրենց ծնողների օրինակին:**

Նրանց բերաններից դուրս հորդող ճչոցները և ատելությունը ոչինչ էր՝ համեմատած այն վախի հետ, որ նրանք ունեին Իմ հանդեպ:

Քանի որ, այդ ամենի հետ միասին, նրանք դեռևս վստահ չէին, արդյո՞ք Ես այն Մեսիան էի, որին իրենք այդքան երկար սպասում էին:

Այդ պատճառով էլ ավելի հեշտ էր ատել Ինձ, մերժել Ինձ, քան թե ընդունել, քանի որ դա կնշանակեր, որ իրենք պետք է փոխեին իրենց ճանապարհները:

Իմ ամենատառապալի պահն այն էր, երբ Ես ընկա գետնին կողքի վրա, նորից մեջքիս ոտքի հարված ստացա և տեսա Իմ սիրելի Մորը՝ Ինձ նայելիս:

Նրա սիրտը կոտրված էր, և նրան պահում էին Իմ աշակերտներից երկուսը:

Ես նրան կարողանում էի տեսնել միայն մնացած մի աչքի միջոցով և Ինձ համար դժվար էր դիմանալ՝ տեսնելով նրա տառապանքը:

Ծաղր ու ծանակը, ծաղրանքն ու ոռնոցը, որ գալիս էր հազարավոր ամբոխից, Ես պատկած զգում էի գետնի միջոցով, և **Իմ և ուրիշ վեց հոգու խաչելությունը կազմակերպելու և վերահսկելու համար պահանջվեց վեց հարյուր զինվոր:**

Ես նրանց ուշադրության հիմնական կենտրոնն է, և մյուսներն այնպես չտառապեցին, ինչպես Ես:

Երբ Իմ դաստակները մեխվեցին խաչին բութ մատերի հիմքում, Ես այլևս չէի կարողանում զգալ:

Իմ մարմինն այնքան ծեծված ու կապտած էր, որ Ես շոկի մեջ էի:

Իմ ուսերը խախտվել էին իրենց տեղից և Իմ բազուկները դուրս էին եկել իրենց խոռոչներից:

Նախքան Ինձ կմեխեին խաչի վրա, Ինձ հասցվել էին ամենավատ ֆիզիկական վնասվածքները:

Ես ոչ մի ճիչ չարձակեցի:

Ոչ մի բողոք:

Միայն մի շշունջ:

Դա կատաղեցրեց Ինձ մահապատժի ենթարկողներին, ովքեր ռեակցիա էին ցանկանում իրենց զգայականի բավարարման համար:

Ես երբեք չխոսեցի նրանց հետ, քանի որ այդ անել՝ կնշանակեր, որ Ես կխոսեի Սատանայի և նրա չարքերի հետ, որոնք մտել էին նրանց հոգիների մեջ:

Այդ էր պատճառը, որ նրանց չարությունն Իմ հանդեպ այդքան ուժեղ էր:

Ես կախված մնացի խաչի վրա հինգ ժամ:

Արևն այրում էր, ամպեր չկային որ նվազեցներին Իմ մաշկի այրվելը:

Հենց որ Ես շնչեցի վերջին շունչս, Իմ Հայրը առաջ քշեց սև ամպեր և որոտ ու կայծակ:

Փոթորիկը, որ տեղի ունեցավ, այնպիսի սարսափելի ուժգնության էր և այքան հանկարծակի, որ Իմձ դիտողների մոտ այդ ժամանակ կասկած չմնաց, որ Ես իրոք այն Փրկիչն էի, որն ուղարկվել էր Հայր Աստծո կողմից:

Ես բացահայտում եմ քեզ սա, աղջիկս, որպես մի ընծա՝ քեզ, ի պատասխան այն մեծ տառապանքի, որը դու առաջարկեցիր Ինձ:

Ասա Իմ զավակներին, որ Ես չեմ ափսոսում Խաչի վրա Իմ Տառապանքի համար:

Ես ափսոսում եմ նրա համար, որ Իմ զահաբերությունը մոռացվել է, և որ այնքան շատերն են ժխտում, որ Իմ խաչելությունը տեղի է ունեցել:

Շատերը գաղափար չունեն, թե Ես ինչ տառապանք կրեցի, քանի որ Իմ առաքյալներից շատերն ականատես չեղան Իմ Գողգոթա բարձրանալուն:

Ինձ այսօր վիրավորում է այն, որ այնքան շատերն են դեռևս մերժում Ինձ:

Իմ կոչը ձեզ, Իմ հետևորդներ, սա է, որ թույլ չտաք Իմ խաչելությունն անտեղի կորչի:

Ես մեռա ԲՈԼՈՐ մեղքերի համար, ներառյալ նրանց, որոնք այսօր կատարվում են:

Ես ցանկանում են և կարիք ունեմ փրկելու նույնիսկ նրանց, ովքեր մերժում են Ինձ նույնիսկ այսօր:

Ձեր Սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Ես խնդրում եմ ձեզ. Ինձ նորից մի խաչեք

Ուրբաթ, 30 մարտի, 2012թ, ցերեկվա ժ 03:00

Իմ սիրելի աղջիկ, կարևոր է, որ Աստծո բոլոր զավակները հասկանան, թե Ես ինչու մեռա՝ փրկելու համար աշխարհը հավիտենական դատապարտումից:

Սատանան, ով թագավորում է մարդկության սրտերում Ադամի և Եվայի անկումից ի վեր, կարծում է, թե ինքը հաջողությամբ գողացել է հոգիներ:

Մարդկության մեծ մասը չի ընդունում Աստծո խոսքը, հատկապես Պատվիրանները, որոնք տրվեցին Մովսեսի միջոցով:

Այդ ժամանակ Ես ուղարկվեցի, ապահովելու համար, որ մարդկությանը տրվի ճշմարտությունը՝ այն հույսով, որ աշխարհը ընդունի դա և ետ շրջվի դեպի Հայրը:

Չնայած շատերն ընդունեցին Իմ Ամենասուրբ Խոսքը, մեծամասնությունը մերժեց ընդունել Ինձ որպես Մեսիան:

Ճշմարտությունն այն է, որ նրանք ոչ մեկին չէին ընդունի, ներառյալ մարգարեներին, որովհետև բավարարված էին զգում ապրել մեղքի մեջ, որը բռնել էր նրանց հոգիները:

Եթե նրանք Ինձ ընդունեին, Ես կթագավորեի երկրի վրա, և ողջ մարդկությունը կարող էր հավիտենական փրկություն ստանալ:

Դրա փոխարեն Ես մերժվեցի:

Հրեաները՝ Իմ սեփական ժողովուրդը, արհամարհեցին Ինձ:

Փարիսեցիները վերևից էին նայում Ինձ վրա, սակայն երբ նրանք լսեցին Իմ Սուրբ Խոսքը, չկարողացան Ինձ պարզապես անտեսել:

Դա այն պատճառով էր, որ Իմ խոսքերը նրանց սրտերում կայծ վառեց, որը նրանց համար դժվար էր վանել:

Ուստի նրանք շարունակում էին նորից ու նորից գալ Ինձ մոտ՝ Ինձ հարցեր տալու:

Այսօր նույնը ճշմարիտ է: Ձեզնից նրանք, ովքեր հայտարարում են, թե մերժում են Իմ մարգարեի միջոցով ասված Իմ խոսքը, չեն կարող պարզապես հեռանալ:

Չնայած ձեր մերժման հայտարարություններին, դուք շարունակում եք նորից ու նորից ետ գալ:

Ժամանակի ընթացքում դուք կընդունեք Իմ խոսքը, որն այսօր տրվում է ձեզ:

Դուք չպետք է անեք այն նույն սխալը, որն արեցին նրանք, ովքեր ոչ միայն մերժեցին Ինձ, այլև խաչեցին Ինձ:

Ես խնդրում ե ձեզ: Ինձ նորից մի խաչեք:

Թույլ տվեք Ինձ առաջնորդել ձեզ դեպի փրկություն՝ հիմա Ինձ լսելով, մինչ Ես կանչում եմ ձեզ երկնքից, որ նախապատրաստեմ ձեզ փրկության և Իմ Նոր Դրախտի համար:

Ձեր սիրող Հիսուս

Կույս Մարիամ. Ես բարեխոսն եմ: Իմ միջոցով Ես կբերեմ ձեր աղոթքները Իմ թանկագին Որդու առջև

Ուրբաթ, 30 մարտի, 2012թ, երեկոյան ժ 11:45

Զավակս, դու պետք է իմանաս, որ մինչ քեզ տրվող Իմ Որդու պատգամները փոխվում են՝ բացահայտելով թե՛ անցյալ, և թե՛ գալիք դեպքեր, դու ավելի շատ հարձակման կենթարկվես:

Իմ Որդու Սուրբ Խոսքը միշտ կմերժվի նրանց կողմից, ովքեր մերժում են լսել Նրան:

Մարդկային կարծիքը կարևոր չէ:

Այս ժամանակ Իմ Որդու հաղորդակցությունն աշխարհի հետ չափազանց կարևոր է, և չպետք է թույլ տալ նանց, ովքեր հակառակվում են այս պատգամներին, ուշացնել կամ շեղել քո ուշադրությունն այս աշխատանքից:

Հիմա Խաչի վրա Իմ Որդու Տառապանքի մասին խոնարհ խորհրդածության ժամանակն է:

Իմ զավակները պետք է պատվեն այն զոհաբերությունը, որը Նա կատարեց ողջ մարդկության համար, Ավագ շաբաթվա ընթացքում իրենց անձնական զոհողությունները կատարելու միջոցով:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք, զավակներս, աշխարհում խաղաղության համար:

Աղոթեք նաև Հռոմի Պապի պաշտպանության համար կաթոլիկ եկեղեցու հանդեպ կատաղի դիմադրության այս ժամանակներում:

Աղոթքը, խոնարհությունը և Իմ Որդու հանդեպ պարզ նվիրվածությունն անհրաժեշտ են, որպեսզի դուք մոտենաք Իմ Որդու սրտին:

Ես բարեխոսն եմ: Իմ միջոցով Ես կբերեմ ձեր աղոթքներն Իմ թանկագին Որդու առջև:

Իմ միջոցով Ես կօգնեմ ձեզ սիրել Նրան ավելի շատ և տալ Նրան այն սփոփանքը, որի կարիքը նա ունի հիմա, երբ աշխարհը նշում է Խաչի վրա Նրա Մահվան հիշատակը:

Ձեր Սիրող Մայր

Մայր Փրկության

Իմ Նոր Հրաշքները կներկայացվեն աշխարհին

Շաբաթ, 31 մարտի, առավոտյան ժ 11:00

Իմ սիրելի աղջիկ, դու պետք է խիզախ մնաս քո տառապանքի ընթացքում և թույլ չտաս, որ վախը ներս մտնի քո սրտի մեջ:

Միության մեջ, ճշմարտապես Ինձ հետ, քո տառապանքը համընկնում է այն շաբաթվա հետ, որը նշում է Խաչի վրա Իմ մահվան հիշատակը:

Դա պատահականություն չէ: **Քանի որ այն տառապանքը, որը դու և նման այլ ընտրյալ հոգիներ կրում եք այս շաբաթվա ընթացքում, Դժոխքի կրակներից միլիոնավոր հոգիներ կփրկի:**

Ճիշտ ինչպես Ես կրեցի ցավ, խոշտանգում և մահ՝ մարդկությանը հավիտենական դատապարտումից փրկելու համար, նույն կերպ զոհաբերվող հոգիները փրկում են այլ հոգիների, որպեսզի նրանց տրվի հավիտենական կյանքի ընծան:

Անկախ նրանից, թե որքան դժվար և սարսափեցնող է այդ տառապանքը, միշտ հիշիր այն ընծան՝ մարդկությանը, որը նա ներկայացնում է:

Զավակներս, մինչ Ավագ շաբաթը սկսվում է, խնդրում եմ մտորեք Խաչի վրա Իմ Տառապանքի մասին:

Ոչ թե պարզապես տառապանքի մասին, այլ ազատության այն ընծայի, որը տառապանքը տալիս է մարդկությանը:

Իմ Գթասրտությունից դուրս չի մնա ոչ մի հոգի, ներառյալ նրանք, ովքեր սատանայի ազդեցության տակ ընկած դաժան և կարծրացած մեղավորներ են:

Գթասրտությունից, որը հնարավոր դարձավ այն ընծայի պատճառով, որն Իմ սիրելի Հայրը տվեց աշխարհին:

Երբ Նա ուղարկեց Ինձ՝ Իր միակ Որդուն, Նա կատարեց ամենամեծ զոհաբերությունը:

Այդ զոհաբերությունը՝ Իր բոլոր զավակների հանդեպ ունեցած ջերմ սիրո ապացույցը, նշանակում է, որ հնարավոր է մեկընդմիշտ ոչնչացնել սատանային:

Իմ Հոր կողմից մարդկությանը տրված ազատ կամքի պատճառով յուրաքանչյուր մարդու կտրվի ընտրություն:

Դու կլինեք կամ Իմ Հոր կողմից, կամ Նրա դեմ:

Դուք կընտրեք կամ Հավիտենական Կյանքի Դրախտը, կամ Դժոխքի սարսափը:

Սատանան, մինչ նրա օրերը համարյա վերջանում են, ետ չի նստի երբ Իմ նոր հրոշքները ներկայացվեն աշխարհին այս ժամանակ:

Նա ոչ միայն կհարձակվի խավար հոգիների վրա՝ նրանց ավելի մոտեցնելու խավարին ու իր տիրապետմանը, այլև թիրախ կդարձնի նվիրված քրիստոնյաների:

Հրաշքները, որոնց մասին Ես խոսում եմ, առաջին հերթին Իմ հաղորդակցությունն է քո միջոցով, աղջիկս: Իմ ձայնը լսվում է, և դարձը բազմապատկվում է:

Միլիոնավոր հոգիներ են գալիս Ինձ մոտ հիմա այս պատգամների միջոցով:

Մյուս հրաշքների մեջ մտնում են Իմ Գթասրտության մեծ ընծան, որը Ես շուտով կբերեմ աշխաչհին, երբ Նախազգուշացումը տեղի ունենա:

Առաջին անգամ յուրաքանչյուր մարդու, կնոջ և երեխայի կտրվի ապացույցը, որ ոչ միայն Հայր Աստված գոյություն ունի, այլև Ես՝ Հիսուս Քրիստոսը, Նրա Միակ Որդին նույնպես գոյություն ունեմ:

Սա նշանակում է, որ բոլոր կրոնները, ներառյալ հրեա ժողովուրդը՝ Իմ ընտրյալ ժողովուրդը, որոնցից Ես եկա, կհասկանան ճշմարտությունը:

Գլոբալ դարձի հրաշքը կկատաղեցնի սատանային, ով տեղի չի տա նույնիսկ այդ էտապում: Սարսափելի մեղքի մեջ գտնվող խեղճ հոգիների համար դժվար կլինի նրանից դուրս պրծնել:

Այլ հրաշքների թվում կլինեն գլոբալ իրադարձություններ, ներառյալ **էկոլոգիական հրաշքներ, որոնք կտրվեն Իմ Հոր կողմից Իր երկու վկաների՝ քրիստոնյաների և հրեաների հանդեպ ունեցած սիրուց ելնելով:**

Ուժ կտրվի այս երկու հավատքներին, երբ նրանք հալածանքի ենթարկվեն:

Նրանց թշնամիները կտառապեն, երբ նրանց սարսափելի պատժի ենթարկեն:

Իսկ հետո կլինի Իմ Երկրորդ Գալուստը, ամենամեծ հրաշքը Իմ հարությունից հետո:

Դա կլինի այն օրը, երբ Ես կգամ դատելու կենդանիներին ու մեռածներին:

Դա այն օրն է երբ Ես կգամ հավաքելու Իմ ընտանիքը, որպեսզի մենք դառնանք մեկ:

Հետո կսկվի Իմ թագավորությունը, երբ Երկինքն ու երկիրը միանան՝ դառնալով մեկ 1.000 տարի:

Այդ ժամանակ բոլորը կապրեն Իմ Հոր Աստվածային Կամքով:

Ձեր սիրող Հիսուս